# ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ «ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ*

## (1944—1973)

### 1946

**404. ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ժեստ մը։** [Փարիզաբնակ Նուն Զավրիևի կողմից իր հանգուցյալ ամուսին Հովհ. Զավրիևի գրականությունը Հայաստան ուղարկելու մասին]: 1946, ապրիլ-մայիս, էջ 81:

**405. ՀԱՅՐԵՆԻ հողի հանձնում երիտասարդության։** [Էջմիածնի ազգային-եկեղեցական ժողովի պատգամավորների նախաձեռնությամբ կազմակերպված ցերեկույթ, Կահիրեի հայ հասարակայնության համար: Տպավորություններ Խորհրդային Հայաստանից: Նույն տեղում երևույթը լուսաբանող նկարներ]: 1946, հունվար, էջ 21—27:

Բովանդ.՝ **[Յազըճյան Առաքել]:—Հայրենիքեն բերված հողը։** (Կալիֆորնիայի թեմի աշխարհական պատգամավոր Առաքել Յազըճյանի հողի հանձնման հանդեսի առթիվ խոսած ուղերձը):—**Կեռչերյան Հ.—Հարենի հողին խորհուրդը։** (Հողը ստացող երիտասարդության անունից՝ Հ. Կեռչերյանի խոսած ուղերձից):

**406. ՀԱՅՐԵՆԻՔ վերադարձող հայերը շրջապատված են ստալինյան հոգատարությամբ։** 1946, հունիս-հուլիս, էջ 79—80:

**407. ՀԱՅՐԵՆԻՔԻ կանչը։** [Բանաստեղծություն]: 1946, հունվար, էջ 29:

Ստորագր.՝ Մ.:

**408. ՀԱՆԴԻՍԱՎՈՐ նիստ նվիրված Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան Պետական Համալսարանի 25-ամյակին։** 1946, ապրիլ- մայիս, էջ 67—69:

Նկար՝ Երևանի Պետական համալսարանի շենքը:

**409. ՀԱՆՈՒՆ հայ մշակույթի զարգացման։** [Հայ ձեռագրերի պահպանման հարցը սփյուռքում]: 1946, ապրիլ-մայիս, էջ 10—14:

**410. ՀԱՐԱԶԱՏ հողի վրա։** [Հայրենադարձները Մարալիկում]: 1946, նոյեմբ.-դեկտ., էջ 75:

**411. ՀԱՐԱՎԱՅԻՆ Ամերիկայի թեմի առաջնորդ գեր. տ. Գարեգին արքեպիսկոպոսի տպավորությունները Սովետական Միության մասին։** 1946, հունվար, էջ 61:

**412. ՀԱՐԳԱՆՔԻ երեկո։** [Հունվարի 21-ին Թեհրանի Հայ ակումբի սրահում, ի պատիվ ս. Աստվածածին մայր եկեղեցին կառուցող Ռոման Եսայանի]: 1946, փետրվար-մարտ, էջ 29—30:

Նկարներ՝ Ռոման Եսայան, Գևորգ Զ, Գարեգին Ս. և Ռոման Եսայան:

**413. ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ Կորեայի կուլտուրական-հասարակական կազմակերպությունների գործիչների պատվիրակությունը Երևանում։** [Սեպտեմբերի 20-ին: Նաև՝ ընդունելություն Գևորգ Զ կաթողիկոսի կողմից]: 1946, օգոստ.-սեպտ.-հոկտ., էջ 90:

**414. ՀՈՎՀԱՆՆԱՎԱՆՔԻ վերականգնումը։** [Պատմական հուշարձանների պահպանության կոմիտեի կողմից: Գլխավոր տաճարի և բազիլիկայի արևելյան պատերի ամրացումն ու վերականգնումը]: 1946, ապրիլ-մայիս, էջ 72:

Նկար՝ Հովհաննավանք. արևմտյան ժամատունը (ԺԳ դար) նորոգելուց առաջ:

**415. ՀՈՒՆԱԿԱՆ «Էֆիմերիս» թերթը Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրության մասին։** 1946, հունվար, էջ 62:

**416. ՀՈՒՆԱՍՏԱՆԻ հայերուն վիճակը։** [Վիճակագրական տվյալներ]: 1946, փետրվար-մարտ, էջ 85:

**417. ՀՈՒՆԱՍՏԱՆԻՑ Սովետական Հայաստան ժամանեց հայերի մի մեծ խումբ։** 1946, օգոստ.-սեպտ.-հոկտ., էջ 88:

**418. ՀՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏ։—Հայկական ՍՍՌ-ում արտասահմանյան հայերի ընդունումը և տեղավորումը նախապատրաստելու վերաբերյալ ՍՍՌՄ Մինիստրների Սովետի որոշումները կենսագործելու միջոցառումները։ (Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի և Հայաստանի Կ(բ)Պ Կենտկոմի 1946 թ. հուլիսի 9-ի որոշումը):** 1946, հունիս-հուլիս, էջ 80—84:

**419. ՀՐԱԿԱՅՈՒՆ աղյուսների գործարան։** [Ալավերդու շրջանի Թումանյան գյուղում]: 1946, փետրվար-մարտ, էջ 77:

**420. ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ժողով ի նպաստ ներգաղթի մեկ միլիոն տոլարի։** [Կազմակերպված Հ. Բ. Ը. Միության Նյու-Յորքի և շրջակայքի ներգաղթի հանգանակիչ հանձնաժողովի կողմից]: 1946, նոյեմբ.-դեկտ., էջ 82—83:

Բովանդ.՝ Ուղերձ Արշակ Գարակյոզյանի, Վահան Մալեզյանի և Լևոն-Զավեն Սյուրմելյանի, որը և ընթերցում է իր երկու քերթվածները:

**421. ՂԱԶԱՐՈՍՅԱՆ ԳՈՀԱՐԻԿ։—Կոմիտասի անհայտ երգերը։** 1946, ապրիլ-մայիս, էջ 42:

**422. ՂՈՒԿԱՍՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ։—Հայրենադարձի օրագրից։** [Հայաստանում Սովետական կարգերի հաստատման 26-րդ տարեդարձի առթիվ]: 1946, նոյեմբ.-դեկտ., էջ 10—11:

**423. ՃԱՎԱՅԻ հայերը։** [Ճապոնական պատերազմի հետևանքով, Սուրաբայայից Սինգապուր գաղթելու մասին]: 1946, ապրիլ-մայիս, էջ 78:

**424. ՄԱԳՍՈՒՏՅԱՆ ՆՈՒՊԱՐ։—Կիպրահայ քրոնիկ։** [Պատմական ակնարկ Կիպրոսի հայկական գաղութի մասին]: 1946, ապրիլ-մայիս, էջ 82:

**425. ՄԱԳՍՈՒՏՅԱՆ ՆՈՒՊԱՐ** (Կիպրոս)։—**Արձագանք մը Կիպրոսի հայության պատմութենեն։** [Պատմական ակնարկ]: 1946, հունվար, էջ 62—63:

**426. ՄԱԳՍՈՒՏՅԱՆ ՆՈՒՊԱՐ։** (Կիպրոս)։—**Երդումը ու անոր սովորությունը հին հայոց մեջ։** [Ուսումնասիրություն: Հեղինակի դիմանկարով]: 1946, փետրվար-մարտ, էջ 48—54:

**427. ՄԱԼԽԱՍՅԱՆՑ ՍՏԵՓԱՆ։—Հայերեն և արաբերեն Ագաթանգեղոսները։** [Համեմատական ուսումնասիրություն]: 1946, նոյեմբ.-դեկտ., էջ 24—34:

* Ծարունակված «Էջմիածին» ամսագրի 1973 թվականի № Դ-ից:

Նկարներ՝ Խոր Վիրապի վանքը։—Ս. Հռիփսիմեի վանքը։—Ս. Գայանեի վանքը։

**428. ՄԱԼԽԱՍՅԱՆՑ ՍՏԵՓԱՆ.—Մեսրոպ Մաշտոցի ծագման մասին։** [Ուսումնասիրություն]։ 1946, փետրվար-մարտ, էջ 55—58։

Նկարներ՝ Մալխասյան։—Մաշտոց։ Գործ՝ նկարիչ Վ. Սուրենյանցի։

**429. ՄԱՅՐ ԱԹՈՌ։** 1946, հունվար, էջ 11։

Բովանդ.՝ [Հանդիսավոր պատարագներ Մայր Տաճարում, նոր տարվա, Ծրագալույցի տոների առթիվ։ Շնորհավորական հեռագրերի ստացում թեմերից]։ [Հունվարի 22-ին, սգո հանդիսավոր նիստ ճեմարանում նվիրված Լենինի մահվան տարեդարձին]։ [Կարապետ Ասլամազյանին քահանայական և վարդապետական կոչում շնորհելու մասին]։

**430. ՄԱՅՐ ԱԹՈՌ։** 1946, փետրվար-մարտ, էջ 26։

Բովանդ.՝ [Փետրվարի 28-ին Վարդանանց տոնի առթիվ հանդիսավոր պատարագ Մայր Տաճարում]։—[Վազգեն Ամատունուն Օշական գյուղի եկեղեցում քահանա ձեռնադրելու մասին]։—[Սուրեն եպիսկոպոս Թորոսյանը նշանակվում է Ռումինիայի թեմի առաջնորդ]։—[Տեղեկություն Ճեմարանի դասընթացների ընթացքի մասին]։—[Նախապատրաստական աշխատանքներ Մայր Տաճարի վերանորոգման համար]։

**431. ՄԱՅՐ ԱԹՈՌ։** 1946, ապրիլ-մայիս, էջ 17։

Բովանդ.՝ [Հարության տոնի առթիվ հանդիսավոր պատարագ Մայր Տաճարում։ Նաև՝ Շնորհավորական հեռագրերի ստացում]։—[Ալեքսանդրիայի եկեղեցու քահանաներ Մեսրոպ Քեռչկերյանին և Հայկազուն Ոսկերչյանին կաթողիկոսի կողմից ծաղկյա փիլոնով և լանջախաչով պարգևատրելու մասին]։—[Ապրիլի 28-ին կաթողիկոսի պատվիրակության՝ Ա. Առաքելյան, Ն. Մանուկյան, մեկնումը Բեյրութ, Մկրտիչ Մսրլյանի կողմից Մայր Աթոռին նվիրած տպարանի փոխադրության գործը կարգավորելու նպատակով]։—[Եզնիկ վարդապետ Ազնավուրյանին Գեղարդի վանքի վանահայր նշանակելու մասին]։

**432. ՄԱՅՐ ԱԹՈՌ։** 1946, հունիս-հուլիս, էջ 27—28։

Բովանդ.՝ [Հունիսի 13-ին՝ Գևորգ Զ-ի մեկնումը Սոչի]։—[Հունիսի 16-ին՝ Ռուբեն եպիսկոպոս Դըրամբյանի մեկնումը Թեհրան]։—[Հուլիսի վերջերին, Ադրբեջանի և Թուրքեստանի թեմի առաջնորդ, Ներսես եպիսկոպոս Աբրահամյանի այցը Մայր Աթոռ]։—[Հունիսի 16-ին՝ Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի առաջնորդ Կարապետ եպիսկոպոս Թումանյանի այցը Մայր Աթոռ]։—[Ատրպատականի թեմից՝ Կարապետ ավագ քահանա Մանուկյանին ականակուռ լանջախաչով պարգևատրելու մասին]։—[Եգիպտոսի թեմի Ալեքսանդրիա քաղաքից՝ Վարդան քահանա Գարակյոզյանին, ծաղկյա փիլոնով պարգևատրելու մասին]։—[Կահիրեում և Հելիպոլսում հայկական եկեղեցու և դպրոցի կառուցում եգիպտահայ Օհանիկ Պոտուրյանի նվիրատվությամբ։ Այդ առթիվ Պոտուրյանին՝ հայրապետական պարգևատրում, ս. Լուսավորչի Ա աստիճանի շքանշան]։—[Հելիպոլսում, մանկապարտեզի շենքի կառուցում։ Եգիպտահայ Տիգրան Միրճանյանի նվիրատվությամբ։ Այդ առթիվ՝ հայրապետական գոհունակության և օրհնության կոնդակ]։—[Բրիտանասովետական բարեկամության ընկերության այցը Մայր Աթոռ]։—[Հուլիսի 12-ին, Երևանում կառուցվող կաթողիկոսական վեհարանի շենքի հիմքի օրհնությունը]։—[Հուլիսի 7-ին և 10-ին, Գերագույն Հոգևոր Խորհրդում, Ճեմարանի Ա և Բ կուրսերի ուսումնական ծրագրերի հաստատում]։

**433. ՄԱՅՐ ԱԹՈՌ։** 1946, օգոստ.-սեպտ.-հոկտ., էջ 25—26։

Բովանդ.՝ [Սեպտեմբերի 28-ին հանդիսավոր պատարագ Գևորգ Զ-ի անվանակոչության առթիվ և շնորհավորական հեռագրերի ստացում]։—[Սեպտեմբերի 28-ին հանդիսավոր պատարագ Գևորգ Զ-ի անվանակոչության առթիվ]։—[Օգոստոսի 5-ին Աթենքից ստացվեց մեռոնօրհնության համար Տ. Կալփակյանի նվիրաբերած ձիթապտղի յուղը]։—[Վեհափառ Հայրապետի կոնդակով պարգևատրումներ տ. Կարապետ քահ. Գալֆայանին (Եդեմ, Կալիֆորնիա), ավագություն՝ տ. Պսակ քահ. Սարգսյանին և տ. Պետրոս քահ. Հակոբյանին (Սան-Ֆրանցիսկո) լանջախաչ]։—[Ընդունելություն ճեմարանի Ա կուրսում 35 ուսանող]։—[Թեհրանի թեմի առաջնորդ Ռուբեն եպիսկոպոս Դրամբյանի դիմումը՝ պատգամավորական ժողով գումարելու համար 110 պատգամավորի փոխարեն 55 հրավիրելու մասին]։—[ՍՍՌՄ-ի հետ կուլտուրական կապի անգլիական ընկերության նախագահի և քարտուղարի այցը Էջմիածին]։—[Հայ գրողների այցը Մայր Աթոռ և ընդունելություն Վեհափառի մոտ]։—[Հյուսիսային Կորեայի կուլտուրական-հասարակական կազմակերպությունների գործիչների պատվիրակության այցը Էջմիածին]։—[Իրան-Հնդկաստանի թեմի առաջնորդ՝ Վահան եպիսկոպոս Կոստանյանի խնդրանքը թույլատրել Ներգաղթի հետևանքով թափուր մնացած եկեղեցական ու դպրոցական շենքերի և եկեղեցական հողամասերի վաճառումը]։—[Իրան-Հնդկաստանի թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոս Կոստանյանի նախաձեռնությամբ, հավաքվում են թեմում գտնվող ձեռագրերը, ինչպես նաև ներգաղթի հետևանքով մնացած եկեղեցական գույքը, հետագայում Մայր Աթոռ ուղարկելու նպատակով]։—[Հարավային Ամերիկայից Տիարպեքիրյան եղբայրների առաջարկությունը՝ Հայաստանում կառուցել մանարան իր սարքավորումներով]։—[Ամերիկայի Հայոց բարեգործական ընկերությունից և Հարավային Ամերիկայից հագուստեղենի և կոշկեղենի հակեր ստանալու և կառավարության հանձնելու մասին]։

**434. ՄԱՅՐ ԱԹՈՌ։** 1946, նոյեմբ.-դեկտ., էջ 14։

Բովանդ.՝[Հանդիսավոր պատարագներ Մայր Տաճարում, նոյեմբերի 7-ին, Հոկտեմբերյան հեղափոխության, նոյեմբերի 29-ին՝ Հայաստանում սովետական կարգերի հաստատման տարեդարձների առթիվ]։—[Հանդիսավոր պատարագ Թբիլիսիի ս. Գևորգ եկեղեցում, Հայաստանում սովետական իշխանության հաստատման 26-րդ տարեդարձի առթիվ]։

**435. ՄԱՅՐ Տաճարի վերանորոգության շուրջը։** Արձանագրություն։ 1946, հունիս-հուլիս, էջ 33—36։

Բովանդ.՝ **Ստորագր.՝ Հանձնաժողովի անդամներ. Ա. Իսահակյան, Մ. Սարյան, Հ. Կոչոյան, Ս. Սաֆարյան, Մ. Գրիգորյան, Ա. Սարգսյան, Վ. Հարությունյան։—Արձանագրություն։ Ստորագր.՝ ենթահանձնաժողովի անդամներ. ճարտարապետ Վ. Հարությունյան, ինժեներ Ա. Մարտիրոսյան, ճարտարապետ Ռ. Իսրայելյան, ճարտարապետ Խ. Ռոստոմբեկյան, ինժեներ-կոնստրուկտոր Ա. Սարգսյան։—Մի էջ Մայր Տաճարի վերանորոգության համար կազմըված նախահաշվից։**

**436. ՄԱՆԻԵ Մ.։—Կարսն ու Արդահանը Հայաստանին կպատկանին։** 1946, ապրիլ-մայիս, էջ 59։

**437. ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆ։** [Մահվան տարելիցի առթիվ]։ 1946, նոյեմբ.-դեկտ., էջ 54—56։

Ստորագր.՝ Ն.։

Դիմանկարով։

**438. ՄԱՆՐ հիդրոտուրբինների գործարանում։** [Արտադրանքի մասին]։ 1946, նոյեմ.-դեկտ., էջ 79։

**439. ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ այցելուների մատյանից։ Ազգային-եկեղեցական ժողովի մասնակիցները մատենադարանի մասին։—Արտասահմանի հասարակական-քաղաքական գործիչները և սովետական գիտության և գրականության ականավոր գործիչները մատենադարանի մասին։—**[Գրառումների հեղինակ-

ների դիմանկարներով]: 1946, ապրիլ-մայիս, էջ 35—41:

Բովանդ.՝ **Գարեգին կաթողիկոս:—Գարեգին եպիսկոպոս Տրապիզոնցի:—Սիոն եպիսկոպոս Մանուկյան:—Ֆրանսահայ պատգամավորություն:—Պետրոս Թերզյան:—Պատրիկ Սելյան:—Հանրի Բարբյուս (ֆրանսիացի գրող):—Էդվին Սմիտ: (Սովետա-Ամերիկյան բարեկամության Ազգային խորհրդի դիրեկտոր):—Մանուել Մեսսա: (Ռուս-Մեքսիկական ինստիտուտի գլխավոր քարտուղար):—Ա. Թ. Դայ: (Օքսֆորդի համալսարանի դոցենտ):—Դոկտոր Հյուլետ Ջոնսոն (Քենտրբերիի տաճարի ավագերեց):—Ակադեմիկոս Լ. Օրբելի (ֆիզիոլոգ):—Պրոֆ. Ճեստակով (պատմաբան):—Ակադեմիկոս Ե. Տարլե: (Պատմաբան):—Ակադեմիկոս Խ. Կոշտոյանց (ֆիզիոլոգ):—Դերենիկ Դեմիրճյան:—Սովետական Միության հերոս գեներալ-լեյտենանտ Ս. Մարտիրոսյան:**

**440. ՄԱՐԱՋԱԽՏ** **Տիտոն հայ ժողովրդի և Հայաստանի մասին:** [Հայկական հարցի առթիվ]: 1946, փետրվար-մարտ, էջ 71:

**441. ՄԱՐԹԱՅԱՆ ՕԾԻՆ:—Ինչու կուզեմ Հայաստան երթալ: (Սահակյան վարժարանի Ե դասարանի աշակերտ, տասնմեկ տարեկան Օշին Մարգարյանի դպրոցական շարադրությունը):** 1946, փետրվար-մարտ, էջ 18:

**442. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Հ.** (Հայֆայից):—**Ներգաղթ:** 1946, փետրվար-մարտ, էջ 14—15:

**443. ՄԵԼՔՈՆՅԱՆ ՋԱՐԵՀ** (Հալեպից):—**Էջմիածին:** [Բանաստեղծություն]: 1946, փետրվար-մարտ, էջ 9:

**444. ՄԵԼՔՈՆՅԱՆ Վ.:—Պասրահայ գաղութը:** [Քաղաք՝ Պարսից ծոցում]: 1946, նոյեմբ.-դեկտ., էջ 87—88:

**445. ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ** գործարան: [Էջմիածնում կառուցելու մասին]: 1946, փետրվար-մարտ, էջ 77:

**446. ՄԵԾԱՆՈՒՆ գիտնական ժոլիո Կյուրին Հայաստանի և հայ ժողովրդի մասին:** [Հայկական հարցի առթիվ]: 1946, փետրվար-մարտ, էջ 71:

**447. ՄԵԾԱՏՈՒՐ ՄԱՐԻ:—Ս. Գևորգ զորավարի տոնակատարությունը ս. Էջմիածնում:** [Հանդիսավոր պատարագ Մայր Աթոռում]: 1946, օգոստ.-սեպտ.-հոկտ., էջ 26:

**448. ՄԵԿ միլիոն երկու հարյուր տասը հազար դասագիրք:** [ՀՍՍՀ տարրական և միջնակարգ դպրոցների համար]: 1946, հունիս-հուլիս, էջ 85:

**449. ՄԵԿ** շիշ **«Արարատ» քոնյակը 20.000 տոլարի:** [Քաղվածք՝ Էջմիածնի Ազգային-եկեղեցական ժողովի Հարավ Ամերիկայի պատգամավոր Պ. Պահչենյանի նամակից]: 1946, փետրվար-մարտ, էջ 85:

**450. ՄԻ խումբ հայերի մեկնումը Սիրիայից և Լիբանանից ՍՍՌՄ:** 1946. հունիս-հուլիս, էջ 90:

**451. ՄԻՆԱՍՅԱՆ ՄԻՆԱՍ:—Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանը:** [Վերաբացման մեկամյակի առթիվ]: 1946, հունիս-հուլիս, էջ 30—32:

Նկարներ՝ ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի շենքը:—Ճեմարանի մի խումբ սաներ, կենտրոնում ճեմարանի տեսուչ՝ Մ. Մինասյանը:

**452. ՄԻՐԱՔՅԱՆ ՎՌԱՄ:—Իմ տպավորությունները:** [Իրանահայ հայրենադարձի տպավորություններ Երևանի մասին]: 1946, օգոստ.-սեպտ.-նոյեմ., էջ 70—71:

Հեղինակի դիմանկարով:

**453. ՄՈՒՀԻՏՏԻՆ ՆՈՒՐԻ:—Առաջին կարավանը:** [Հալեպից Սովետական Հայաստան մեկնող հայրենադարձների մասին]: 1946, նոյեմբ.-դեկտ., էջ 68—69:

**454. ՆԱԶԱՐ Ա.:—Էջմիածին և Կիլիկիա կաթողիկոսության:** [Երկու կաթողիկոսների բարեկամական հարաբերությունների մասին]: 1946, հունիս-հուլիս, էջ 44—45:

**455. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ են ՍՍՌՄ Գերագույն Սովետի ընտրություններին:** 1946, հունվար, էջ 56:

**456. ՆԱՄԱԿ խմբագրության: Երևան: Պատվարժան խմբագրության «Էջմիածին» ամսագրի:** [Կահիրեից: «Սասունցի Դավիթ»ներգաղթի օժանդակ մարմնի վարչության կողմից]: 1946, նոյեմբ.-դեկտ., էջ 95:

Ստորագր.՝ Ատենապետ՝ Խ. Հովհաննիսյան, Ատենադպիր՝ Հ. Մեքերյան: Վարչության անդամներ:

**457. ՆԱՅԻՆՆԵՐԸ Արտաշես Աբեղյանի աջակցությամբ ինչպես կողոպտեցին Նուպարյան մատենադարանը:** [Փարիզից Բեռլին է տարված 1.343 հատոր գիրք, որից հայերեն՝ 950, մնացածը եվրոպական լեզուներով, 500-ի չափ կազմած ու անկազմ պարբերականներ, 33 հայերեն հին ձեռագրեր: Կողոպուտի մեջ կան հազվագյուտ և անգտնելի գրականություն: Մոտավոր հաշիվներով կողոպտված է 440.000 ֆրանկի արժողությամբ գրականություն]: 1946, ապրիլ-մայիս, էջ 24:

**458. ՆԵՐԳԱՂԹ դեպի հայրենիք:** 1946, փետրվար-մարտ, էջ 17:

**459. ՆԵՐԳԱՂԹԱԾ հայ գրողների ստեղծագործությունների երեկոն:** [Գրողների տանը]: 1946, նոյեմ.-դեկտ., էջ 76—77:

**460. ՆԵՐԳԱՂԹԻ լուրը և Պոլսո հայերը:** 1946, փետրվար-մարտ, էջ 17:

**461. ՆԵՐԳԱՂԹԻ հետքերով:** [Եգիպտոսի «Էլ-Ահրամ» թերթից]: 1946, նոյեմբ.-դեկտ., էջ 72:

**462. ՆԵՐԳԱՂԹՈՂ:—Ինչ կըսեն արձանագրվողները: (Պտույտ մը արձանագրության կեդրոններու մեջ):** 1946, փետրվար-մարտ, էջ 19—20:

**463. ՆԵՐԳԱՂԹՈՂ հայերի նոր խումբ** [Իրանից]: 1946, օգոստ..-սեպտ.-հոկտ., էջ 88:

**464. ՆԵՐԳԱՂԹՈՂՆԵՐԻ առաջին քարավանի ժամանումը:—Ներգաղթողների երկրորդ քարավանի ժամանումը:—Իրանահայերի ժամանումը:—Ներգաղթողների երրորդ քարավանի ժամանումը:—Շարունակվում է ներգաղթողների նորանոր խմբերի ժամանումը:** 1946, հունիս-հուլիս, էջ 59—74:

Ստորագր.՝ Վ.:

Նկարներ՝ Գնացքը կանգ առավ հայրենի հողի վրա: Եկվորները գնացքից իջել և համբուրում են հայրենի հողը:—Երևանի կայարանում. դիմավորողների մի խումբ:—Երևանի կայարանում. Արտասահմանյան հայերի առաջին քարավանի ժամանումը:

**465. ՆԵՐՍՈՅԱՆ ՏԻՐԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ:—Տիրան եպիսկոպոս Ներսոյանի դիմումները:** (1945 դեկտեմբեր 6—9 Ֆիլադելֆիո մեջ գումարված Ամերիկայի Հայոց Առաջնորդական թեմի տարեկան երեսփոխանական ժողովի որոշմամբ և հանուն նույն ժողովին, առաջնորդ Ս. Հայրը հետևյալ հեռագրական դիմումները կատարած է Միացյալ Նահանգաց նախագահին, Խորհրդային Միության Գերագույն Խորհրդի նախագահին և երեք Մեծերու Արտաքին գործոց նախարարներուն, երբ վերջիններս խորհրդաժողով ունեին Մոսկվայի մեջ): 1946, փետրվար-մարտ, էջ 80—81:

Բովանդ.՝ **Մեծապատիվ Հերրի Ս. Թրումեն: Նախագահ Միացյալ Նահանգաց: Ուաշինգթըն.—Տ. Ք.:—Մեծապատիվ Միխայիլ Կալինին: Նախագահ ՍՍՀՄ Գերագույն Սովետի նախագահության: Մոսկվա:—Վյաչեսլավ Մ. Մոլոտով արտաքին կոմիսար, Ջեյմզ Ֆ. Բըրնզ պետական քարտուղար, Էրնեսթ Բեվին արտաքին նախարար: Արտաքին Գործոց նախարարներու խորհրդաժողով: Մոսկվա:**

**466. ՆՈՐ** էլեկտրական վառարան: [Երևանի Կաբելի գործարանում շահագործման հանձնվելու մասին]: 1946. նոյեմբ.-դեկտ., էջ 79:

**467. ՆՈՐ հայտնագործումներ Կարմիր Բլուրում:** [ՀՍՍՀ Գիտ. Ակադեմիայի պատմության ինստիտուտի և Պետական Էրմիտաժի հնագիտական միացյալ արշավախմբի, ղեկավար **Բ. Պիոտրովսկի,** աշխատանքների մասին]: 1946, հունիս-հուլիս, էջ 85—86:

**468. ՆՈՐ տարի:** [Խմբագրական]: 1946, հունվար, էջ 5—8:

**469. ԾԱՀԱԶԻԶ ԵՐՎԱՆԴ:—Գամառ-Քաթիպայի անտիպ նամակներից:** [Ծանոթություն: Բնագիր՝ Պատկանյանի նամակը՝ հորը, գրված 1879 թ. Անիից]: 1946, ապրիլ-մայիս, էջ 50—53:

Նկարներ՝ Գամառ-Քաթիպա:—Անի: Կաթողիկե եկեղեցին:

**470. ԾԱՀԱԶԻԶ ԵՐՎԱՆԴ:—Կարապետ Եզյան, Մկրտիչ Սանասարյան, Լևոն Տիգրանյան:** [Կենսագրություն: Ազգային-հասարակական գործունեությունների մասին]: 1946, օգոստ.-սեպտ.-հոկտ., էջ 60—64, նոյեմբ.-դեկտ., էջ 43—53:

Մատենագիտ. էջ 53:

Նկարներ՝ Մ. Սանասարյան:—Լ. Տիգրանյան:

**471. ԾԱՀԱԶԻԶ ԵՐՎԱՆԴ:—Միքայել վարդապետ Սալլանթյան:** 1946, փետրվար-մարտ, էջ 41—47:

Նկարներ՝ **Երվանդ Ծահազիզ,** Միքայել Սալլանթյան, Հառիճավանքի ընդհանուր տեսքը:

**472. ԾԱՀԱԶԻԶ ԵՐՎԱՆԴ:—Ծահինյան Մանվել ծայրագույն վարդապետ Գյումուշխանեցի:—Գյումուշխանեցու թողած գրական ժառանգությունը:** [Ուսումնասիրություն: Բնագրեր: Մատենագիտական ցանկ]: 1946, հունիս-հուլիս, էջ 50—55:

**473. ԾՆՈՐՀԱԼԻՆ անգլերեն:** [Միսիոնարուհի Ժեն Ս. Վինկելյթի չափածո անգլերեն թարգմանությամբ Ներսես Շնորհալու «Յիսուսի Որդի»-ն Ամերիկայում հրատարակվելու մասին]: 1946, ապրիլ-մայիս, էջ 81:

**474. ՈՍԿԵՐՉՅԱՆ ՄԱԾՏՈՑ ՔԱՀԱՆԱ:—Ուրախ է հայ ժողովուրդը:** [1945 թվի հայ ժողովրդի կարևոր իրադարձությունների մասին]: 1946, փետրվար-մարտ, էջ 8:

**475. ՉՈՐՄԻՍՅԱՆ ԼԵՎՈՆ:—Տպավորություններ և խորհրդածություններ:** [Խորհրդային Հայաստանի մասին]: 1946, փետրվար-մարտ, էջ 11—12:

**476. ՊԱՀԱՆՋՆԵՐ ԱՄՆ-ում հայկական հողերը Սովետական Հայաստանին վերադարձնելու մասին:** 1946, փետրվար-մարտ, էջ 79:

**477. ՊԱՏՐԻԱՐՔ Նիկոդիմի վերադարձը Ռումինիա:** [Մոսկվայից]: 1946, նոյեմբ.-դեկտ., էջ 17:

**478. ՊԱՐԵԼՈՒ առաջնություն:** [Փարիզի կոնսերվատորիայում կազմակերպված մրցահանդեսում՝ օրիորդ Հովհաննիսյան]: 1946, նոյեմբ.-դեկտ., էջ 87:

**479. ՊԱՐՈՆ Դեննիս Նոել Պրիտտը Երևանում:** [ՍՍՌՄ-ի հետ կուլտուրական կապի անգլիական ընկերության նախագահ, պառլամենտի անդամ]: 1946, օգոստ.-սեպտ.-հոկտ., էջ 81—82:

Նույն տեղում՝ **Պրիտտ Դ. Ն.:—Իմ պատասխանը:** [Հայաստանի և հայկական հարցի մասին]:

**480. ՊԵԼԺԻԿԱՀԱՅ կյանք:** 1946, ապրիլ-մայիս, էջ 77—78:

**481. ՊԵԿՅԱՆ ՎԱՐՍԵՆԻԿ:—«Ձեզի կհարցնեմ տիկիններ և պարոններ»:** [Ջավեն Սյուրմեյանի անգլերեն լեզվով նույնանուն գրքի մասին: Գրախոսություն: Սյուրմեյանի դիմանկարով]: 1946, նոյեմբ.-դեկտ., էջ 83—86:

**482. ՊԵՏԱԿԱՆ պատմական թանգարանում:** [Թանգարանի կազմակերպված արշավախմբերի գիտական աշխատանքների մասին]: 1946, հունվար, էջ 56—57:

**483. ՊԵՏԻՐՅԱՆ ԱՐՄԵՆ:—Հրաժեշտ Հալեպին:** [Բանաստեղծություն, ներգաղթի առթիվ]: 1946, փետրվար-մարտ, էջ 23:

**484. ՊԼԵՔ ԱԼԾԵՐՆ:**—Petition to the uno. (**Պարոն Պլեք Հայ իրավանց պաշտպանության Ամերիկյան հանձնախմբի անդամներեն մին է, Սոսայթի ֆոր Էթիքլ Քըլչըր ընկերության առաջնորդը Նյու-Յորքի մեջ, և շատ գործոն դեր կկատարե քաղաքական և ընկերային բարեկարգման շարժումներու և հարցերու մեջ):** 1946, նոյեմբ.-դեկտ., էջ 69—72:

**485.«ՊՈՂՊԱՏ» մետաղագործական արտելը:** [Լենինականում: Հիմնել են Բուլղարիայից Սովետական Հայաստան վերադարձած հայերի մի խումբ]: 1946, նոյեմբ.-դեկտ., էջ 76:

**486. ՊՈՒԼԿԱՐ սոպրանիեի հայ երեսփոխանուհին:** [Մաքրի Խաչիկի Աբրահամյան]: 1946, նոյեմբ.-դեկտ., էջ 87:

**487. ՊՈՒԼԿԱՐԱՀԱՅ Փոքրամասնության առժամյա կոմիտեի զեկույցը:** [1922 թ. գաղթի ժամանակ Բուլղարիա բերված եկեղեցական իրերի, երեք կտոր ձեռագիր հին ավետարանների, ինչպես և Զեյթունի 1895 թվի ապստամբությունից մի դրվագ պատկերող յուղանկարի առաքումը Սովետական Հայաստան]: 1946, նոյեմբ.-դեկտ., էջ 14—15:

Ստորագր.՝ Նախագահ՝ **Գ. Գաբրիելյան:** Ատենադպիր՝ **Մ. Խաչիկյան:**

**488. ՋՐԱՆՑՔԻ կառուցում:** [Զանգվից Քասախ գետի ավազանը հոսող ջրանցքի կառուցման մասին]: 1946, հունվար, էջ 56:

**489. ՌՈՒՄԱՆԱՀԱՅ կյանք:** 1946, նոյեմբ.-դեկտ., էջ 88—89:

**490. ՌՈՒՄԱՆԻՈ նոր առաջնորդին Պուքրեշ ժամանումը:** [Սուրեն եպիսկոպոս Թորոսյան]: 1946, հունիս-հուլիս, էջ 28—29:

**491. ՌՈՒՄԻՆԱՀԱՅԵՐԻ նվերը:** [Բուխարեստում բնակվող Խոջա Հարությունը (իմա՝ Գևորգ Հաճի Արթինյան) Հանրային գրադարանին նվեր է ուղարկել 395 գիրք]: 1946, նոյեմբ.-դեկտ., էջ 77:

Նկարիչներ Բ. Վարդանյանի և Հ. Ավագյանի նըկարների նվիրատվությունը Հայաստանի պատկերասրահին: Նվիրված է նաև 60 մահճակալանոց հիվանդանոցի սարքավորում:

**492. Ս. ԷՋՄԻԱԾՆԻ հոգևոր ճեմարան:** [1946—1947 ուս. տարվա ընդունելության հայտարարություն]: 1946, ապրիլ-մայիս, էջ 84:

**493. ՍԱՐԳՍՅԱՆ Հ.** (Բեյրութից):—**Հայրենիքին ձայնը:** [Ներգաղթի առթիվ]: 1946, փետրվար-մարտ, էջ 12—13:

**494. ՍԱՐՈՅԱՆ արաբերենով:** [«Մարդկային կատակերգություն» գրքի թարգմանության մասին]: 1946 ապրիլ-մայիս, էջ 81:

**495. ՍԱՐՈՅԱՆ ՎԻԼՅԱՄ:—Ուիլյամ Սարոյան իր մասին: (Թեև ես գրում եմ անգլերեն, և թեև ծագումով ամերիկացի եմ, բայց ես ինձ համարում եմ հայ գրող):** 1946, օգոստ.-սեպտ.-հոկտ., էջ 93:

Սարոյանի դիմանկարով:

**496. ՍԵԼԼԵՐԻ եղույթը Թյուրքիային փոխառություն տրամադրելու դեմ:** 1946, հունիս-հուլիս, էջ 89:

**497. ՍԵՎԱՆԻ պրոբլեմի լայն քննարկումը:** [ՀՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի 7 ինստիտուտների համատեղ նիստը]: 1946, օգոստ.-սեպտ.-հոկտ., էջ 88—89:

**498. ՍԻՐԱՆՈՒՇԻ հուշարձանի բացումը:** [Կահիրեի գերեզմանատանը]: 1946, հունիս-հուլիս, էջ 91:

**499. ՍՄԻԹ ԷՏՈՒԻՆ Ս.:—Իմ այցը Սովետական Հայաստան: Ճառ՝ կարդացված Հայաստանի 25-րդ տարեդարձին առթիվ, Մանհաթըն Սենթրի մեջ, Նյու-Յորք, դեկտեմբեր 9, 1945 թ.:** 1946, հունիս-հուլիս, էջ 75—78:

**500. [ՍՅՈՒՐՄԵՅԱՆ] ԱՐՏԱՎԱԶԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ:—Հայ ժողովրդին Վատիկանը Էջմիածինն է: (Արտավազդ արքեպիսկոպոսի սույն քարոզը, տրված Պեյրութի «Լևոն Ե Լուսինյան և Մանվել Բ Պալեոլոկ» թեմայով դասախոսություններ հետո, պատասխանն է Արհի Տեր Հովհաննես Արքեպիսկոպոս Նալլյանի ռատիոնեն տված և «Ազդարար» մարտ 1-ի թվին մեջ տպագրված դասախոսության):** 1946, օգոստ.-սեպտ.-հոկտ., էջ 11—12:

**501. [ՍՅՈՒՐՄԵՅԱՆ] Արտավազդ արքեպիսկո-

պոս Փարիզի մեջ: [Որպես հայրապետական լիազոր ներկայացուցիչ: Մեկնումը՝ Բեյրութից Փարիզ օգոստոսի 22-ին: Նպատակը՝ վերակազմել Եվրոպայի թեմը. պատգամավորական ժողովի միջոցով թեմական առաջնորդի ընտրություն]: 1946, նոյեմբ.-դեկտ., էջ 14:

**502.. ՍՈՎԵՏ Հայաստանի պատկերավոր ցուցահանդեսը:** [Լիբանանում]: 1946, փետրվար-մարտ, էջ 85—87:

**503. ՍՈՎԵՏ Հայաստանի 25-ամյակի առիթով լիբանանահայության նվիրատվության հանդիսավոր բացումը Անթիլիասի մեջ:** 1946, փետրվար-մարտ, էջ 84:

**504. ՍՈՎԵՏԱԿԱՆ մամուլի ներկայացուցիչների զրույցը Անգլո-սովետական բարեկամության ընկերության դելեգացիայի անդամների հետ:** 1946, օգոստ.-սեպտ.-հոկտ., էջ 78—81:

Նույն տեղում՝ **Ռև Ջինալդ Բիշոպ: «Ռուսաստանն այսօր» ամսագրի խմբագրի հոդվածը Հայաստանի և հայկական հարցի մասին:**

Նկար՝ Անգլո-սովետական բարեկամության ընկերության դելեգացիայի անդամները Էջմիածնում:

**505. ՍՈՎԵՏԱԿԱՆ** նոր **քաղաքացու ընտանիքը:** [Նոր-Խարբերդում: Ռումինիայից վերադարձած Համայակ Ստեփանյանի ընտանիքի մասին]: 1946, նոյեմբ.-դեկտ., էջ 76:

**506. ՍՍՌՄ Գերագույն Սովետի առաջին սեսիան:—Միութենական ռեսպուբլիկաների ժողովրդական տնտեսության վերականգնման և զարգացման պլանը:—Հայկական Սովետական Սոցիալիստական ռեսպուբլիկայում:** [Վիճակագրական տվյալներ]: 1946, փետրվար-մարտ, էջ 76—77:

**507. ՍՍՌՄ Գերագույն Սովետի ընտրությունները:** 1946, փետրվար-մարտ, էջ 75:

[Նկար՝ Գևորգ Զ-ն քվեատուփի մոտ Մայր Աթոռի միաբաններով]:

**508. ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի հայ նոր թղթակից-անդամներ: [Ա. Ի. Ալիխանյան**—ֆիզիկո-մաթեմատիկական բաժանմունքի գծով, **Ի. Լ. Կնունյանց**—քիմիական գիտությունների, **Ա. Ա. Ավագյան**—բիոլոգիական գիտությունների, **Ս. Գ. Բարխուդարով**—գրականության և լեզվի բաժանմունքի գծով]: 1946, նոյեմբ.-դեկտ., էջ 78:

**509. ՍՏԱԼԻՆՅԱՆ մրցանակի լաուրեատներ:** [1944—1945 թթ.՝ **Վիկտոր Համազասպի Համբարձումյանին, Ստեփան Սարգիսի Մալխասյանին, Համո Սերգեյի Յոլյանին, Գուրգեն Մկրտչի Մուսինյանին, Հարություն Մկրտչի Տեր-Մարգարյանին, Անդրեյ Արկադիի Բաղդասարյանին, Ավետիք Լուկյանովիչ Մազլումովին, Լևոն Նիկիտիի Գազեզյանին, Արամ Եղիայի Խաչատրյանին, Նիկոլայ Կարպի Չեմբերջիին, Կոմիտասի անվան կվարտետին, Հայկանուշ Բաղդասարի Դանիելյանին]:** 1946, հունվար, էջ 57—59:

**510. ՍՏԱԼԻՆՅԱՆ մրցանակի նոր լաուրեատներ: [Արծրունի Մարտիրոսի Գասպարյան, Աշոտ Կարապետի Բալայան, Դավիթ Հովհաննեսի Գաբրիելյան, Վալենտին Բոգդանի Կնունյանց, Դիմիտրի Արկադիի Նալբանդյան, Արմեն Կարապետի Գուլակյան, Միքայել Արտեմի Թավրիզյան, Շարա Մկրտչի Տալյան, Ավետիք Սահակի Իսահակյան]:** 1946, հունիս-հուլիս, էջ 86:

**511. ՎԱՀԱՆԵՆՑ Ա.:—Հալեպահայության փառաշուք ընդունելությունը Կիլիկիո վեհափառ կաթողիկոսին:** [Գարեգին Հովսեփյանին]: 1946, ապրիլ-մայիս, էջ 76—77:

**512. ՎԱՆԱԿԱՆ:—Ս. Գրքի արժեքը ներկայի համար:** 1946, հունվար, էջ 14—16:

**513. ՎԱՐԴԱՆԱՆՔ:** [Վարդանանց պատերազմի ազգային պատմական նշանակության մասին]: 1946, փետրվար-մարտ, էջ 31—35:

Նկարներ՝ **Վարդան զորավար:—Ղևոնդ Երեց:—Պարոնաց պալատի ավերակները Անիում (ԺԳ դար):**

Ստորագր.՝ Վ.:

**514. [ՎԱՐԺԱՊԵՏՅԱՆ] ԲԱԲԳԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ:—Որ ունիցի ականջս... Լուիցէ:** [Էջմիածնի Մայր Աթոռի և Կիլիկիայի կաթողիկոսության հարաբերությունների շուրջը]: 1946, օգոստ.-սեպտ.-հոկտ., էջ 8—10:

Նույն տեղում՝ **Կիլիկիայի կաթողիկոս Գարեգին Հովսեփյանի պատգամը Հայաստանյայց առաքելական եկեղեցու դերի մասին հայ ժողովրդի պահպանման գործում:** էջ 8—10:

**515. ՎԵՆԵՏԻԿԻ Ս. Ղազար կղզին պատերազմի ժամանակ:** [Տեղեկություններ Մխիթարյանների հրատարակչական աշխատանքների մասին]: 1946, ապրիլ-մայիս, էջ 78:

**516. ՎԵՐՆԵՈՑ ԱՆՐԻ:—Հայերը և իրենց պահանջները:** 1946, ապրիլ-մայիս, էջ 54—58:

Բովանդ.՝ **Հայաստանը 1914—1918-ի պատերազմի նախօրյակին:—Հայաստան 1914—1918-ի պատերազմի ընթացքին:—Մուտրոսի զինադադարը (1918. հոկտ. 30):**

**517. «ՎՅԱՉԵՍԼԱՎ Մոլոտով»** շոգենավը տարավ **ներգաղթի 6-րդ և վերջին կարավանը Պուլկարիայեն:** 1946, օգոստ.-սեպտ.-հոկտ., էջ 92:

**518. Տ. ՄԱՏԹԵՈՍ** ծայրագույն վարդապետ **Աջեմյանի մահը:** [Մահախոսական: Դիմանկարով]: 1946, հունիս-հուլիս, էջ 29:

**519. ՏԱՐԱԳՐՈՍ:—Մի քանի խոսք Էջմիածնի Մայր Տաճարի վերանորոգության մասին:** [Հեղինակի դիմանկարով]: 1946, հունիս-հուլիս, էջ 37—40:

Ծանոթություն խմբագրության:

**520. ՏԱՐՈՆՑԻ ՀՈՒՍԱԿ:—Դեպի հայրենիք:—** [Ներգաղթի առթիվ]: 1946, փետրվար-մարտ, էջ 13—14:

**521. ՏԻԳՐԱՆՅԱՆ Է[ԴՄՈՆԴ]:—Ամենայն Հայոց կաթողիկոսի վիլլան Երևանում:** 1946, հունիս-հուլիս, էջ 41—43:

Նկարներ. Կաթողիկոսական վիլլայի շենքի նախագիծը (գլխավոր ճակատը) նախագծի հեղինակ՝ ճարտարապետ՝ Է. Տիգրանյան:—Կաթողիկոսական վիլլայի մեծ հյուրասրահի ինտերյերի նախագիծը: Նախագծի հեղինակ՝ ճարտարապետ Է. Տիգրանյան:

**522. ՏՈՔՏՈՐ Թաշճյանի կտակը:** [Վահան Թաշճյան՝ Լոս-Անջելոսից: 10.000 դոլարի կտակ Սովետական Հայաստանին]: 1946, նոյեմբ.-դեկտ., էջ 87:

**523. ՏՈՔՏՈՐ Ճանսըն Հայաստանը օրինակ կուտա:** [Հուլիետ Ջոնսոնի, Նյու-Յորքում Սովետա-Ամերիկյան բարեկամության հանդեսում, արտասանած ճառից]: 1946, հունիս-հուլիս, էջ 78:

**524. ՔՅՈՒՐՏՅԱՆ Հ[ԱՐՈՒԹՅՈՒՆ]: —Գողցըված ձեռագիրներ:** [Հյուսիսային Ամերիկայում: Ղալաթիայի մատենադարանին պատկանող հայ ձեռագրերի ապօրինի վաճառքի մասին: Նաև՝ երբեմն Սեբաստիայում և Թավրիզում պահվող ձեռագրերի վաճառքի մասին]: 1946, ապրիլ-մայիս, էջ 19—23:

Արտատպված՝ «Պայքար», Բոստոն, 1946, 15, 16 հունվարի:

Նկ.՝Հոռոմոսի վանքի (Ղոշավանք) մեծ ժամատան տեսքը (ԺԴ դար):

**525. ՕՀԱՆՅԱՆ Մ.** (Հալեպ):**—«Թե հազար կյանքով հազար երգ կերտենք...»:** [Բանաստեղծություն]: 1946, նոյեմբ.-դեկտ., էջ 3:

Նկ.՝ Երևանի համալսարանը:

**526. ՖԱՐՈՒԽԻ ՕՄԱՐ:—Արևշատություն Սովետ Հայաստանին:** 1946, հունիս-հուլիս, էջ 78:

**527. ՖՐԱՆՍԻԱԿԱՆ համալսարանի 65 ուսանողների հավաքական դիմումը հայրենիք վերադառնալու համար: (Պեյրութի Ֆրանսական համալսարանի**

զանազան բաժիններու ուսանողները 22 հունվար 1946 թվակիր հետևյալ նամակը ուղղած են ներգաղթի Տեղական կոմիտեի նախագահին): 1946, փետրվար-մարտ, էջ 20—21:

**528. ՖՐԱՆՍԱՀԱՅ** **դերձակներ կպատրաստվին Սովետ Հայաստան երթալ:** 1946, փետրվար-մարտ, էջ 22—23:

**529. ՖՐԱՆՍԱՀԱՅԵՐՈՒ դիմումը Մոլոտովին: Նորին գնրեզանցություն Վյաչեսլավ Միխայլովիչ Մոլոտով: Արտաքին գործոց մինիստր ՍՍՌ Միության:** [Հայկական հարցի առթիվ]: 1946, հունիս-հուլիս, էջ 90:

Ստորագր.՝ ֆրանսահայ Ազգային ճակատի նախագահ՝ Հ. Մարմարյան, քարտուղար՝ Մ. Ասատուրյան:

**530. ՖՐԱՆՍԻԱԿԱՆ գործիչները Թյուրքիայի կողմից խլված մարզերը Հայաստանին միացնելու մասին:** 1946, հունիս-հուլիս, էջ 90:

## 1947

**531. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՇՈՏ:—Մադրասի հայ գաղութի դերը հայ ժողովրդի ազատագրական պայքարում: (Դասախոսություն կարդացված Կալկաթայի հայ համայնական ժողովում):** 1947, մայիս-հունիս, էջ 43—54:

Նկ.՝ Մադրասի հայոց եկեղեցին:—Շահամիրյանների տպագրական նշանը:—Մի էջ «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» գրքից:—«Որոգայթ փառաց»-ի տիտղոսաթերթը:—«Ազդարար»-ի առաջին էջը:

**532. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՇՈՏ:—Պրոֆ. դոկտ.— Գառնիի հունարեն արձանագրությունը:** [Ուսումնասիրություն: Հունարեն արձանագրության հայերեն վերծանում]: 1947, մարտ-ապրիլ, էջ 61—72:

Ուսումնասիրությունը ունի մատենագիտական ցանկ. էջ 71—72:

Նկ. Գառնիի հեթանոսական տաճարի մակետը, վերականգնումը՝ Տարագրոսի:—Արձանագրություն:—Խոյակներ:

**533. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՇՈՏ:—Ստեփանոս Դաշտեցու հանելուկները:** [17-րդ դարի վերջի 18-րդ դարի սկզբի հեղինակ: Ուսումնասիրություն: Բնագիր]:

Բնագիր՝ **Ստեփանոս Դաշտեցի:—Հանելուկ արարեալ ումենէ Ստեփաննոսէ Դաշտեցւոյ:—Ոտանաշարութիւն գեղջուկ ի վերայ Նոր Ջուղայեցւոյ ասացեալ Ստեփաննոս Դաշտեցւոյ:** [Չափածո]: 1947, հունվար-փետրվար, էջ 48—54:

**534. ԱԳՐՈՔԻՄԻԱԿԱՆ լաբորատորիա:** [ՀՍՍՀ Գիտությունների Ակադեմիայում, նույնանուն լաբորատորիայի կազմակերպման մասին]: 1947, մայիս-հունիս, էջ 78:

**535. ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ մեծ բանաստեղծ Նիզամի Գյանջևիի ծննդյան 800-ամյակը:** 1947, սեպտ.-հոկտ., էջ 80—81:

Նկ.՝ Նիզամի Գյանջևի:

**536. ԱԶԳԱՅԻՆ խորհուրդը կառաջարկե Աչընանին Հայոց հողային պահանջը դնել Միացյալ Ազգաց օրակարգի վրա:** [Պատվիրակության պաշտոնական այցը Աչեսոնին]: 1947, հունիս-օգոստ., էջ 37—38:

**537. ԱԼԵՔՍԱՆԴՐ Սպենդիարովի անվան Լենինի շքանշանակիր օպերայի և բալետի պետական թատրոնում:** [Արամ Խաչատրյանի «Գայանե» բալետի, Վանո Մուրադելու «Արտակարգ կոմիսար» օպերայի և այլ օպերաների բեմադրությունների մասին]: 1947, մայիս-հունիս, էջ 77:

**538. ԱԼԵՔՍԻ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ:— ՀՍՍՌ: Էջմիածին: Գևորգ Զ-ին:** [Հեռագիր: Բուխարեստում հայոց եկեղեցին այցելելու առթիվ]: 1947, մայիս-հունիս, էջ 10:

**539. ԱԼԻՇԱՆՅԱՆ Ռ.:—Հայրապետական Աթոռը Սսից Էջմիածին փոխադրելու 500-ամյակի հոբելյանի նշումը հոգևոր ճեմարանում:** 1947, նոյեմբ.-դեկտ., էջ 21—22:

**540. ԱԼՊՈՅԱՃՅԱՆ ԱՐՇԱԿ:—Հայադավանության տարածման շրջանակը: Ա. Հայաստանի մեջ:— Բ. Հայաստանեն դուրս:** 1947, մարտ-ապրիլ, էջ 20—30, մայիս-հունիս, էջ 20—25:

**541. ԱԼՊՈՅԱՃՅԱՆ ԱՐՇԱԿ:—Ճշտում մը: Նամակ խմբագրության:** [Կահիրեից: «Էջմիածին» ամսագրի խմբագրությանը. «Տէր կեցո, դու զՀայս» երգը սխալմամբ Մեսրոպ Թաղիադյանին վերագրելու առթիվ]: 1947, սեպտ.-հոկտ., էջ 95:

**542. ԱՂԲՅՈՒՐ հուշարձան:** [Երևանից Նախիջևան տանող խճուղու եզրին]: 1947, նոյեմբ.-դեկտ., էջ 84:

**543. ԱՄԵՆ ինչ հայրենիքի ու ներգաղթի համար:** 1947, մարտ-ապրիլ, էջ 9—11:

**544. ԱՄԵՆԱՅՆ Հայոց հայրապետության Սսեն Էջմիածին փոխադրության 500-ամյակի հոբելյանը:** [Բուխարեստի հայկական եկեղեցում]: 1947, նոյեմբ.-դեկտ., էջ 28—29:

**545. ԱՄԵՆԱՅՆ Հայոց Վեհափառ Հայրապետ Տ. Տ. Գևորգ Զ-ի գահակալության երկրորդ տարեդարձը:** 1947, մայիս-հունիս, էջ 6—8:

**546. ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ:— Հուշագիր, արտաքին գործոց նախարարներու Ժողովին:** 1947, մայիս-հունիս, էջ 83—84:

Հուշագրում նկարագրվում են հայկական հարցի հետ կապված բոլոր իրադարձությունները՝ սկսած 1876-ի Սան-Ստեֆանոյի դաշնագրից: Նշվում է հայկական հարցի միջազգային լինելու հանգամանքը: Հայերի իրենց հողերին իրավատեր լինելու հանգամանքի ճանաչումը թե՛ եվրոպական և թե՛ թուրքական կառավարությունների կողմից: Ամերիկահայ ազգային խորհուրդը պահանջում է օրակարգի դնել հայկական հարցը և տալ նրա արդարացի լուծումը:

Ստորագր.՝ Ամերիկահայ ազգային խորհուրդ: Տնօրեն՝ Պետրոս Թերզյան:

**547. ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ:— Պաշտոնական կոչ համաշխարհային Հայկական կոնգրեսի:** 1947, մարտ-ապրիլ, էջ 12—13:

Ստորագր.՝ Ատենապետ՝ **Նշան Շահինյան,** փոխատենապետ՝ **Մարտիկ Մարտենց,** քարտուղար՝ **Սեդրակ Շահեն,** գանձապահ՝ **Մեսրոպ Պագանյան:**

**548. ԱՆՀԱՏԱԿԱՆ բնակարանային շինարարություն Լենինականում:** [Հայրենադարձների համար: Բաց է թողված 14 միլիոն 850 հազար ռուբլի վարկ]: 1947, մարտ-ապրիլ, էջ 79:

**549. ԱՆՏԱՌԱՏՆԿՈՒՄԸ Կիրովականում:** [Փորձակայանի մասին]: 1947, սեպտ.-հոկտ., էջ 81—82:

**550. Ա[ՇՈՏ] Պատմագրյան Պաղեստինի մեջ:** [Համերգ դասախոսությունների կազմակերպում հօգուտ ներգաղթի]: 1947, հունվար-փետրվար, էջ 93:

Ստորագր.՝ Թղթակից:

**551. ԱՌԱՔԵԼՅԱՆ Ս.:—Թարմ հուշեր:** [Հայրենադարձի հուշերը հայրենի հողի վրա]: 1947, մարտ-ապրիլ, էջ 73—75:

**552. ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ Բ[ԱԲԿԵՆ]:—Մայրագույն Պատրիարք և կաթողիկոս Ամենայն Հայոց Գևորգ Զ-ին Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից արտասահմանից ներգաղթող հայերի ընդունման և տեղավորման կոմիտեի նախագահ՝ Բ. Աստվածատրյանի գրությունը:** [Շնորհակալություն Սան-Պաուլոյի հայկական հանձնաժողովին, սփյուռքից ներգաղթած հայերի համար կոշիկ և զգեստ ու-

ղարկելու առթիվ]: 1947, մարտ-ապրիլ, էջ 14:

**553. ԱՎԱԳՅԱՆ Գ.:—Համբարձում Պերպերյանի համերգները Յաֆայի և Երուսաղեմի մեջ:** 1947, նոյեմբ.-դեկտ., էջ 88:

**554. ԱՎՏՈՄԱՏ հեռախոսակայանի** շինարարություն Երևանում: 1947, սեպտ.-հոկտ., էջ 84:

**555. ԱՐԱԶԴԱՅԱՆԻ ճահճուտների օգտագործումը:** [Տափաստան Արարատյան դաշտավայրում]: 1947, հունվար-փետրվար, էջ 85:

**556. ԱՐԱՄ Խաչատրյանի «Գայանե» բալետի բեմադրությունը Կիևի թատրոնում:** 1947, սեպտ.-հոկտ., էջ 78:

**557. ԱՐԱՄՅԱՆ ՀԱԿՈԲ:—Հանդիպում Ամենայն Հայոց Հայրապետի հետ:** [Հայրենադարձի տպավորություններ]: 1947, նոյեմբ.-դեկտ., էջ 23—26:

Նկար՝ Գևորգ Զ-ն վեհարանի այգում:

**558. ԱՐԱՄՅԱՆ ՀԱԿՈԲ:—Ս. Մեսրոպի շիրիմին առջև:** [Բանաստեղծություն]: 1947, սեպտ.-հոկտ., էջ 54:

**559. ԱՐԱՄՅԱՆ ՀԱԿՈԲ և ԲՈՅԱՋՅԱՆ ՀԱՅԿԱԶ:—Մի խումբ հայրենադարձների խոսքը:** [Հեռագիր Բաթումից ՀԿԿ Կենտկոմի քարտուղարին և Գերագույն Սովետի նախագահին]: 1947, սեպտ.-հոկտ., էջ 72:

**560. «ԱՐԱՐԱՏ» շաբաթաթերթ:** [Բրազիլիայի Սան-Պաուլո քաղաքում պորտուգալերեն լեզվով]: 1947, սեպտ.-հոկտ., էջ 94:

**561. ԱՐԹԻՆՅԱՆ ՀՈՎՀ.** (դոկտ., Ֆրանսիա):—**Պրոֆեսոր Ֆրեդերիկ Մակլեր:** [Անվանի հայագետի մահվան մասին: Նաև նրա կատարած հայերեն թարգմանությունների, այդ թվում Ծիրվանզադեի «Պատվի համար»-ի անտիպ թարգմանության մասին]: 1947, մարտ-ապրիլ, էջ 77:

**562. ԱՐԺԵՔԱՎՈՐ նվեր:** [Լենինգրադի կոնսերվատորիայի պրոֆ. Աննա Նալբանդյանից, ՀՍՍՌ Ալ. Մյասնիկյանի անվան պետական գրադարանին, հինգ արկղ արժեքավոր գրականություն]: 1947, սեպտ.-հոկտ., էջ 78:

**563. ԱՐՏԱՎԱԶԴ սրբազան [Սյուրմեյան] Հոլանտայի մեջ:** [Եվրոպայի հայրապետական նվիրակի այցը Հոլանդիայի հայ գաղութին]: 1947, սեպտ.-հոկտ., էջ 48:

**564. ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ Սովետական Հայաստանին նվեր ուղարկված «Ամիր Տովլաթի բժշկարան»-ի ձեռագրի մասին:** [Խարբերդի բժիշկ Հարություն Հեքիմյանի ձեռագիր օրինակը]: 1947, հուլիս-օգոստ., էջ 91:

**565. ԲԴՈՅԱՆ Վ[ԱՐԴ]:—Հայկական ՍՍՀ պետական պատմական թանգարանը:** [Թանգարանի մշակութային հարստությունների մասին]: 1947, հուլիս-օգոստ., էջ 47—52:

Երեք լուսանկար թանգարանի ցուցասրահներից:

**566. ԲԴՈՅԱՆ Վ[ԱՐԴ]:—Ստեփան Լիսիցյան:** [Կենսագրական ակնարկ: 1947, հունվար-փետրվար, էջ 40—42:

Ստ. Լիսիցյանի դիմանկարով:

**567. ԲԺՇԿԱԿԱՆ գործը Էջմիածնի շրջանում:** [Վիճակագրական տեղեկություններ]: 1947, հուլիս-օգոստ., էջ 86:

**568. ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ** շինարարություն **հայրենադարձ հայերի համար:** 1947, հուլիս-օգոստ., էջ 13—16:

Բովանդ.՝ **[Երևան]: —Լենինական: — Կիրովական:—Ալավերդի:—Ղափան:—Արթիկ:**

Նկ.՝ Լիբանանից ներգաղթած Անտոն Ղուլումջյանը խաղողի առատ բերք է ստացել:

**569. ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ հայրենադարձ հայերի համար:** 1947, սեպտ.-հոկտ., էջ 76:

**570. ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ կառուցում հայրենադարձ հայերի համար:** [Հայաստանի տարբեր շրջաններում]: 1947, մայիս-հունիս, էջ 73:

**571. ԲՆԱԿԵԼԻ ավան հայրենադարձ հայերի համար:** [Երևանում: Կիրովի անվան գործարանի մոտ]: 1947, մարտ-ապրիլ, էջ 81—82:

**572. ԲՅՈՒԶԱՆԴ ՎԱՂԻՆԱԿ:—«Քնար»-ի համերգը Մարսելի օփերային մեջ:** [Արամ Խաչատրյանի «Ջութակի կոնցերտի» կատարումը]: 1947, սեպտ.-հոկտ., էջ 92—93:

**573. ԲՅՈ՜ՒՐ ողջույն, երկա՜ր կյանք անզուգական եկեղեցական, ջերմ հայրենասեր, բազմավաստակ գիտնական ալեզարդ հոբելյարին** [Գարեգին Ա կաթող. Հովսեփյանին] **ողջույն նվիրական ու երկնամերձ Արարատի ստորոտից հինավուրց Ս. Էջմիածնի Մայր Տաճարի կամարների տակից:** [Ակնարկ կյանքի ու գործունեության մասին]: 1947, հունվար-փետրվար, էջ 11—13:

**574. ԲՐԱԶԻԼԻԱՅՈՒՄ ապրող հայերը պահանջում են Թյուրքիայի զավթած հողերը միակցել Սովետական Հայաստանին:** [Հայկական միտինգ Սան-Պաուլոյում]: 1947, մայիս-հունիս, էջ 83:

**575. ԳԱԼՖԱՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ ՔԱՀԱՆԱ:—Հրաժեշտի խոսք:** [Արտասանված Համաշխարհային հայկական կոնգրեսում]: 1947, հուլիս-օգոստ., էջ 45—46:

**576. ԳԱՍՊԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ:—Բռնագրաված հողերը դարձնել մեզի:** [Կալիֆորնիայի Հայոց առաջնորդական տեղապահի ճառը արտասանված Նյու-Յորքում կայացած համաշխարհային հայկական կոնգրեսում]: 1947, մայիս-հունիս, էջ 38—39:

**577. ԳԱՎՈՒՔՃՅԱՆ ՀԱՅԿ:—Հայկ Գավուքճյանի նամակը:** [Կաթողիկոսին, Լոնդոնից: Էջմիածնի տպարանի համար սարքավորումներ գնելու, նաև ճեմարանին նյութական օգնություն ցույց տալու մասին]: 1947, հուլիս-օգոստ., էջ 23—24:

**578. [ԳԱՐԵԳԻՆ Ա** Հովսեփյան]: **Տանն Կիլիկիո Վեհափառ կաթողիկոս Տ. Տ. Գարեգին Ա.** [Ձգևատավորված նկարը]: 1947, հունվար-փետրվար, էջ 9:

**579. ԳԱՐԵԳԻՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ:—«Ուխտագնացություն ի Հայաստան» գրքի հառաջաբանը:** [Դերենիկ եպիսկոպոս Փոլատյանի նույնանուն գրքի]: 1947, հուլիս-օգոստ., էջ 88—89:

**580. ԳԵՂԵՑԻԿ ժեստ մը:** [Գր. Սատրճյանի (Մոսուլ) խոստումը՝ Գարեգին Հովսեփյանի երեք հատորանոց յուրաքանչյուր հատորը 100 էջ, գրքերի տպագրական ծախքը հոգալու մասին]: Հուլիս-օգոստ., էջ 89:

**581. ԳԵՎՈՐԳ Զ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Բեյրութ-Անթիլիաս Կիլիկիո կաթողիկոսարան Խադ արքեպիսկոպոսին:** [Հեռագիր]: **Տ. Տ. Գարեգին Ա.-ի** [Հովսեփյան] **քահանայության 50-ամյա, եկեղեցական, գրական-գիտական գործունեության 60-ամյա, և ծննդյան 80-ամյա հոբելյանական տոնակատարությունը** [ավելի մեծ շուքով կատարելու նպատակով] **հետաձգելու մասին:** 1947, հունվար-փետրվար, էջ 10:

**582. ԳԵՎՈՐԳ Զ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Բեյրութ-Անթիլիաս. Կիլիկիո կաթողիկոսարան Խադ արքեպիսկոպոսին** [շնորհավորական հեռագիր] **Տ. Տ. Գարեգին Ա.-ի քահանայության 50-ամյա, եկեղեցական, գրական-գիտական գործունեության 60-ամյա և ծննդյան 80-ամյա հոբելյանի առթիվ:** 1947, հունվար-փետրվար, էջ 8:

**583. ԳԵՎՈՐԳ Զ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Կոնդակ: Տանն Կիլիկիոյ շնորհազարդ կաթողիկոսի Տեառն Գարեգնի հարազատի Մայր Աթոռոյս սրբոյ Էջմիածնի եւ եղբօր մերում սիրելւոյ ողջոյն տիրաւանդ:** [Վեղարի վրա ադամանդյա խաչ կրելու անձնական իրավունք շնորհելու մասին]: 1947, հունվար-փետրվար, էջ 3—4:

**584. ԳԵՎՈՐԳ Զ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Հայրենիքի և հայ ազգի հավատարիմ զա-**

ւակներ: Պատուարժան անդամոց համազգային կոնգրեսի որ ի Նիւ-Յորք եւ կազմակերպողաց նորին, հարազատ զաւակաց Մայր Աթոռոյ Էջմիածնի ողջոյն եւ օրհնութիւն հայրապետական: Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Զ-ի կոնդակը: [Նյու-Յորքում գումարված հայ համազգային կոնգրեսում հայկական հարցի վերանայման առթիվ]: 1947, մարտ-ապրիլ, էջ 3—7:

**585. ԳԵՎՈՐԳ Զ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Մոսկվա: Համայն Ռուսիո վեհափառ պատրիարք Ալեքսիին:** [Պատասխան հեռագիր, Բուխարեստում հայկական եկեղեցին այցելելու առթիվ]: 1947, մայիս-հունիս, էջ 10:

**586. ԳԵՎՈՐԳ Զ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Նյու-Յորք, 17. Համաշխարհային հայկական կոնգրեսին: Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Զ-ի հեռագիրը համաշխարհային հայկական կոնգրեսին:** [Ողջույն կոնգրեսի աշխատանքների սկսվելու առթիվ: Մայր Աթոռի ներկայացուցիչներ են նշանակվում **Տիրան եպիսկոպոս Ներսոյանը և Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանը]:** 1947, մարտ-ապրիլ, էջ 8:

**587. ԳԵՎՈՐԳ Զ** ծայրագույն պատրիարք և կաթողիկոս Ամենայն Հայոց: [Լուսանկար]: 1947, մայիս-հունիս, էջ 1:

**588. ԳԵՎՈՐԳ Զ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Մոսկվա: Աշխատավորների Դեպուտատների Մոսկովյան քաղաքային Սովետին:** [Ողջույնի հեռագիր Մոսկվայի 800-ամյա տոնակատարության առթիվ]: 1947, սեպտ.-հոկտ., էջ 3:

**589. ԳԵՎՈՐԳ Զ ՉՈՐԵՔՉՅԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների հոգևոր դասին սրբազան եղբարց ի Քրիստոս:** [Բողոք ամերիկյան լրագրող Ռոյ Հովարտի, Հայկական դատի վերաբերյալ, Թյուրքիայում արած անպատասխանատու, անհարգալից վերաբերմունքի առթիվ]: 1947, նոյեմբ.-դեկտ., էջ 9—12:

**590. ԳԵՎՈՐԳ Զ ՉՈՐԵՔՉՅԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Մոսկվա: Կրեմլ: Իոսիֆ Վիսարիոնովիչ Ստալինին:** [Ողջույնի հեռագիր Հոկտեմբերյան հեղափոխության 30-ամյակի առթիվ]: 1947, նոյեմբ.-դեկտ., էջ 3—4:

**591. ԳԵՎՈՐԳ Զ ՉՈՐԵՔՉՅԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Շնորհաշուք վանահոր Մայր Տաճարին Քենթրբերի գերապատիվ դոքտոր Հյուլետ Ջոնսոնին: Ողջույն հայրապետական: Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Զ-ի կոնդակը դոկտոր Հյուլետ Ջոնսոնին:** 1947, մայիս-հունիս, էջ 9:

**592. ԳԵՐ. ԱՐՏԱՎԱԶԴ [Սյուրմեյան] արքեպիսկոպոս կընդունի գերապայծառ Ոլոտոնյան արքեպիսկոպոսի այցելությունը:** 1947, սեպտ.-հոկտ., էջ 48:

**593. ԳԻՏԱԿԱՆ սեսիա Լենինգրադի պետական Էրմիտաժում:** [Հետպատերազմյան առաջին գիտական սեսիայում ակադեմիկոս Կ. Վ. Տրևերի զեկուցումը՝ Գառնի ամրոցի կառուցման մասին: Նաև Բ. Բ. Պիոտրովսկու զեկուցումը՝ «Հայաստանի» անվան հնադարյան հիշատակությունը մեր թվ. առաջ 8-րդ դարի ուրարտական բնագրերում]: 1947, մարտ-ապրիլ, էջ 86:

**594. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ առաջավորների պարգևատրումը:** [Լենինի շքանշանով՝ Վանո Ղարիբյանին, Օֆիկ Մադոյանին, Մուշեղ Մկրտչյանին]: 1947, մարտ-ապրիլ, էջ 88:

**595. ԳՆԱՀԱՏԵԼԻ նվիրատվություն:** [Թեհրանաբնակ Մատթեոս Թոմասյանի նվիրատվությունը, Թեհրանի հայ հասարակությանը՝ կինոնկարահանման սարքավորումներ]: 1947, հունվար-փետրվար, էջ 93:

**596. ԳՈՐԾԱՐԿՎԵՑ Ալավերդու սուպերֆոսֆատի գործարանը:** 1947, մայիս-հունիս, էջ 80:

**597. ԳՈՐԾՈՂ ձեռնարկությունների շարքն անցավ հախճապակու գործարանը:** [Երևանում]: 1947, նոյեմբ.-դեկտ., էջ 84:

**598. ԳՈՒՐԳԵՆ Ա.:—Հանդիպում մը Գ[ուրգեն] Ալեմշահի հետ:** [Ֆրանսահայ երգահան]: 1947, նոյեմբ.-դեկտ., էջ 87—88:

Դիմանկարով:

**599. ԳՏՆՎԱԾ երջանկությունը:** [Հայրենադարձ մի քանի ընտանիքի մասին]: 1947, հուլիս-օգոստ., էջ 16—17:

Նկ.՝ Հայրենադարձ Եղիսաբեթ և Հայկանուշ Հակոբյանները Երևանի Կաբելի գործարանում:

**600. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՇԱԿ (Թեհրանից):—Սըրտիս խորքում մի անհուն տենչ...** [Բանաստեղծություն]: 1947, նոյեմբ.-դեկտ., էջ 5:

Նկ.՝ Երևան:

**601. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀՈՎՍԵՓ:—Հիշողություններ Տանն Կիլիկիո վեհափառ կաթողիկոս Գարեգին Հովսեփյանի մասին:** 1947, հունվար-փետրվար, էջ 21—26:

**602. [ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀՈՎՍԵՓ]:—Պողոս առաքյալի թղթերը:** [Ուսումնասիրություն]: 1947, հունվար-փետրվար, էջ 29—34:

Բովանդ.՝ **Թուղթ առ Հռոմայեցիս:—Առ Կորնթացիս առաջին թուղթ:—Առ Կորնթացիս երկրորդ թուղթ:—Թուղթ առ Գաղատացիս:—Թուղթ առ Կողոսացիս:—Առ Թեսաղոնիկեցիս առաջին թուղթ:—Առ Թեսաղոնիկեցիս երկրորդ թուղթ:—Առ Տիմոթեոս առաջին թուղթ:—Առ Տիմոթեոս երկրորդ թուղթ:—Թուղթ առ Տիտոս:—Թուղթ առ Փիլիմոնն:—Թուղթ առ եբրայեցիս:**

Ստորագր.՝ Ճեմարանցի:

**603. [ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀՈՎՍԵՓ]:—Սիմեոն կաթողիկոս Երևանցի:** 1947, հուլիս-օգոստ., էջ 53—60:

Բովանդ.՝ **Սիմեոն Երևանցու կյանքն ու գործունեությունը մինչև կաթողիկոս օծվելը (1710—1763):—Սիմեոն Երևանցու գործունեությունը կաթողիկոս ընտրվելուց հետո (1763—1780):—Սիմեոն կաթողիկոսի հարաբերությունները ռուսական արքունիքի հետ:—Սիմեոն կաթողիկոսի կրթական ու գրական գործունեությունը, նրա բացած տպարանն ու թղթի գործարանը:**

Ստորագր.՝ Ճեմարանցի:

**604. ԴԱՍԱԳՐՔԵՐԻ հրատարակությունը:** [Գալիք ուսումնական տարվա համար. նախատեսված Պետհրատի պլանով]: 1947, մայիս-հունիս, էջ 80.

**605. ԵՂԻԿՅԱՆ ՍԱՀԱԿ ՔԱՀԱՆԱ և ՄԱՆՈՒԿՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ:—Նամակ խմբագրության: Առաջնորդարան Հայոց Ատրպատականի թեմի: Թավրիզ № 519, դեկտ. 2. 1946 թ. Էջմիածին ամսագրի խմբագրության:** [Հերքում՝ 1946 թ. «Էջմիածին» ամսագրի ապրիլ-մայիս համարներում Թավրիզի ս. Աստվածածին եկեղեցուց արծաթյա կազմով ձեռագիր ավետարանի անհայտանալու մասին բանաստեղծ Հ. Քյուրտյանի հոդվածի առթիվ: Ձեռագիրը գտնվում է տեղում. պակաս են միայն չորս ավետարանների առաջին էջերը]: 1947, մայիս-հունիս, էջ 94:

Կից խմբագրության ծանուցումը. ձեռագրերի պահպանման մասին:

**606. ԵՂԻՇԵ վարդապետ Հարությունյան:** [Հայտարարություն մահվան առթիվ, ցավակցական հեռագրեր]: 1947, սեպտ.- հոկտ., էջ 41:

**607. ԵՂԻՇԵ վարդապետ Հարությունյան:** [Մահախոսական-կենսագրական]: 1947, սեպտ.-հոկտ., էջ 43—44:

Դիմանկարով:

**608. ԵՎՐՈՊԱՅԻ կաթողիկոսական նվիրակ գեր. Արտավազդ արքեպիսկոպոս Սյուրմեյանը Իտալիայում:** [Ներգաղթի օգտին հինգ միլիոն լիրեթ հան-

գանակություն կազմակերպելու մասին]: 1947, նոյեմբ.-դեկտ., էջ 27:

**609. ԵՐԳԵՑԻԿ կապելայի ելույթը:** [Հայֆիլհարմոնիայի փոքր դահլիճում: Նորաստեղծ, քառաձայն: Ղեկավարությամբ Թաթուլ Ալթունյանի]: 1947, նոյեմբ.-դեկտ., էջ 84:

**610. ԵՐԳԻ ու պարի անսամբլ:** [Անաստասավան գյուղում]: 1947, սեպտ.-հոկտ., էջ 79:

**611. ԵՐԵՎԱՆ քաղաքի** հայրենադարձ հայերի **ժողովը:** [Անկարայի ռադիոյի, հայրենադարձության մասին ասված զրպարտական հերյուրանքների դեմ]: 1947, մարտ-ապրիլ, էջ 83:

**612. ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ միջազգային փառատոնը Պրագայում:** [Դափնեկիրների թվում են Կարեն Խաչատրյանը, Արնո Բաբաջանյանը, Գևորգ Ֆարմանյանցը]: 1947, սեպտ.-հոկտ., էջ 79—80:

**613. ԶԱՄԳԱՔՃՅԱՆ թանգարանի բացումը Պոլսի մեջ:** 1947, նոյեմբ.-դեկտ., էջ 89:

**614. ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐԻ** շինարարություն: [Ոսկեպատ գետի ափին. նաև՝ միկրոգէսերի կառուցում Կոռք և Ղալաչա գյուղերում]: 1947, հուլիս-օգոստ., էջ 85:

**615. ԷԼԵԿՏՐՈԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ արմատուրայի գործարան:** [Երևանում: Կառուցման մասին]: 1947, մայիս-հունիս, էջ 81:

**616. ԷՆՏՈՒԶԻԱՍՏՆԵՐԻ ընտանիքը:** [Էմիրզա Թարախչյանի և Իսկանդար, Գևորգ ու Գրիգոր որդիների աշխատանքային խմբի մասին]: 1947, հուլիս-օգոստ., էջ 17—18:

**617. «ԷՋՄԻԱԾԻՆ» ամսագրում 1947 թվի ընթացքում տպագրված նյութերի ցանկ:** 1947, նոյեմբ.-դեկտ., էջ 90—95:

**618. ԷՏԿԱՐ Շահինի մահը:** [Ֆրանսահայ նկարիչ: Հուղարկավորությունը Փարիզի հայ եկեղեցուց]: 1947, մարտ-ապրիլ, էջ 95:

Նկ.՝ Շահին: [Ինքնանկար]:

**619. ԷՔՍԵՐՃՅԱՆ ՎԵՐԺԻՆ:—«Էջմիածին»: (Պատմական երաժշտական թատերգություն):** [Լոնդոնաբնակ հեղինակ, նկարիչ-բանաստեղծ Զավեն Պոյաջյանի համանուն երաժշտական թատերգությունը Ամերիկահայ առաջնորդարանի օժանդակ միության կողմից բեմադրվելու մասին]: 1947, հունվար-փետրվար, էջ 87—88:

Հեղինակի և դերակատարների լուսանկարներով:

**620. ԹԵՐԶՅԱՆ ՊԵՏՐՈՍ:—Համաշխարհային հայկական քոնկրեսի որոշումը կհանձնվի Միացյալ ազգերու և Ամերիկայի պաշտոնական ներկայացուցիչներուն:** [Պատգամավորության այցի և ընդունելության մասին]: 1947, սեպտ.-հոկտ., էջ 65—66:

**621. ԹՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆ Լոնտոնեն:** [Նվիրված Հայրապետական Աթոռը Կիլիկիայից Էջմիածին տեղափոխելու 500-ամյակին, մասնակցությամբ անգլիական բարեկամության պատգամավորների: Նաև տպավորություններ Սովետական Հայաստանից]: 1947, մայիս-հունիս, էջ 71—72:

**622. ԹՈՐԱՄԱՆՅԱՆ ԹՈՐՈՍ:—Տեղեկագիր: Էջմիածնի տաճարի հարավային աբսիդի վրա հնագույն կառուցված զանգակատան հանկարծ փլչելու պատճառով վնասված աբսիդի ու ուրիշ փոքր մասերու վերանորոգման:** 1947, մայիս-հունիս, էջ 16—18:

Ստորագր.՝ **Շինարարական աշխատանքների վարիչ՝ ճարտարապետ Թ. Թորամանյան:**

Թորամանյանի դիմանկարով:

Նույն տեղում **խմբագրության կողմից:** Մայր Տաճարի վերանորոգման մասին: 1947, մայիս-հունիս, էջ 18—19:

**623. ԹՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԻ ՊԱՇՏՊԱՆՄԱՆ ԿՈՄԻՏԵ:—Թրքահայաստանի դատի պաշտպանման կոմիտեի նամակը հասցեագրված Մոսկվա—համախմբված Արտաքին գործոց նախարարներին:** 1947, մայիս-հունիս, էջ 84—85:

Սերի դաշնագիրը դենլ գործողության մեջ: Ազատագրել Թուրքահայաստանի բոլոր հայկական նահանգները միացնելով այն Սովետական Հայաստանի հանրապետությանը: Սովետական Հայաստանի տարածքը փոքր է և չի կարող տեղավորել Թուրքիայի հայկական նահանգների բոլոր հայերին:

**624. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ գործիքների նոր անսամբլը:** [Էջմիածնում, հայրենադարձ հայերի ուժերով]: 1947, մայիս-հունիս, էջ 74:

**625. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ստեղծագործության տանը:** [Աշխատանքների մասին]: 1947, հունվար-փետրվար, էջ 83—84:

**626. ԻՆԹՈՅԱՆ ՀՄԱՅԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ:—Արևը պիտի ծագի, արևը արդեն ծագած է Խորհրդային Հայաստանի գոյությամբ:** [Ճառ արտասանված Համաշխարհային հայկական կոնգրեսում]: 1947, հուլիս-օգոստ., էջ 43—44:

**627. [ԻՐԱՆԱՀԱՅ** հայրենադարձ, ազգային եկեղեցական ժողովի պատգամավոր, Բաբկեն Ղուրուշյանի, Երևանում սեփական եռահարկ բնակելի շենք կառուցելու մասին: 3 լուսանկար]: 1947, մարտ-ապրիլ, էջ 80—81:

**628. ԼԱԼՎԱՐԻ բարիտը:** [Հանքաքարի հանույթի նախապատրաստական աշխատանքների մասին]: 1947, մայիս-հունիս, էջ 81:

**629. ԼԱՏՎԻԱԿԱՆ գրողները Երևանում:** 1947, սեպտ.-հոկտ., էջ 80:

**630. ԼԵՆԻՆԻ հրապարակի ընդարձակումը:** [Շինարարական աշխատանքներ]: 1947, նոյեմբ.-դեկտ., էջ 84:

**631. ԼԵՈՅԻ Հայոց պատմությունը:** [Երկրորդ հատորի լույս ընծայման մասին]: 1947, սեպտ.-հոկտ., էջ 79:

**632. ԼԵՎՈՆՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ:—[Մահախոսական-կենսագրական]:** 1947, սեպտ.-հոկտ., էջ 62—63:

Դիմանկարով:

**633. ԼՈՄԱԿՈ Պ. Ֆ.:—Հայաստանի գունավոր մետալուրգիայի զարգացման մասին:** 1947, հուլիս-օգոստ., էջ 81—82:

Նկարներ՝ Քաջարանի բանվորական ավանը:

**634. «ԼՈՒՍԱՎՈՐՉԻ կանթեղ»:** [Գրախոսություն: Գիրքը պատկերում է ԱՄՆ-ի առաքելական եկեղեցու և հայ հասարակական կազմակերպությունների պատկերազարդ պատմությունը]: 1947, հունվար-փետրվար, էջ 89:

Ստորագր.՝ Ս. Հ. Թ.:

**635. ԽԱՉԱՏՈՒՐ Աբովյանի պորտրեն:** [Նկարիչ Ս. Ավետիսյան: Աշխատանքը ավարտելու մասին]: 1947, նոյեմբ.-դեկտ., էջ 78:

**636. [ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ] ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ (կաթողիկոսական պատվիրակ Հարավային Ամերիկահայոց):—Ներգաղթ կամ վերադարձ դեպի տուն:—Մեկ միլիոն տոլարի հանգանակություն:—Մեր սիրելի ժողովրդին:** [Կոչ՝ հայրենադարձության օգտին հանգանակություն կազմակերպելու համար]: 1947, մարտ-ապրիլ, էջ 16—18:

**637. ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ընդունում է հոդվածներ թե Սովետական Միությունից և թե արտասահմանից:** [«Էջմիածին» ամսագրի խմբագրության հայտարարությունը]: 1947, հուլիս-օգոստ., էջ 95:

**638. ԽՈՇՈՐ տպարան:** [Երևանում: Կառուցվելու մասին]: 1947, սեպտ.-հոկտ., էջ 84:

**639. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ արվեստագիտուհիներ Պոլսի մեջ:** [Երգչուհի Քնարիկ Գրիգորյանը և պարուհի Սեդա Սարգսյանը Բուխարեստում]: 1947, մայիս-հունիս, էջ 93:

**640. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ Հայաստանի 26-րդ տարեդարձի պերճաշուք տոնակատարությունը Փարիզի մեջ:** 1947, մարտ-ապրիլ, էջ 93:

**641. ԿԱՐՄԻՐ բլուրի հնագիտական պեղումները:** [ՀՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի պատմության ինստիտուտի աշխատանքները, ղեկավարությամբ՝ Բ. **Պիոտրովսկու]:** 1947, մայիս-հունիս, էջ 79—80:

642. **ԿԵՐՊԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐԻ բնակարան-արվեստանոց**: [Երևանում, հինգ հարկանի շենքի կառուցման աշխատանքները սկսելու մասին]: 1947, մայիս-հունիս, էջ 77:

643. **ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ թանգարանում**: [Ռումինահայ Գրիգոր Զամբախչյանի (Զամպաքճյան) նվիրատվությունը՝ ֆրանսիացի գեղանկարիչներ Թեոդոր Ռուսսոյի «Մթնշաղն անտառում», Մոնտիչելլիի «Երեկոն գետափին» և Բուդենի «Քաղաքի տեսարանը» նկարների]: 1947, մայիս-հունիս, էջ 77:

644. **ԿԻԼԻԿԻՈ թեմը հինգ նոր եպիսկոպոսներ ունեցավ**: [Գարեգին կաթողիկոսի կողմից ձեռնադրվել են՝ Դերենիկ, Փառեն, Զարեհ, Խորեն, Ղևոնդ ծայրագույն վարդապետները]: 1947, հուլիս-օգոստ., էջ 33:

645. **ԿԻԼԻԿԻՈ վեհափառ կաթողիկոս Գարեգին Ա. կօրհնէ հայրենիք մեկնողները**: 1947, սեպտ.-հոկտ., էջ 85:

646. **ԿԻՐՈՎԱԿԱՆԻ բուսաբանական այգին**: [Ծառատեսակների մասին]: 1947, սեպտ.-հոկտ., էջ 82:

647. **ԿՈՄԻՏԱՍԻ անվան Երևանի կոնսերվատորիան**: [Համառոտ տեղեկություններ]: 1947, հունվար-փետրվար, էջ 82:

648. **ԿՈՄԻՏԱՍԻ ձեռագրերը**: [ՀՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի երաժշտության պատմության և տեսության ենթաբաժնում Փարիզի «Կոմիտասյան ընկերությունից» Կոմիտասի ձեռագրերի մի մասի ստացման մասին]: 1947, մայիս-հունիս, էջ 78:

649. **ԿՈՄՊՈԶԻՏՈՐ Երվանդ Սարդարյանի ստեղծագործություններին նվիրված համերգ**: [Հայֆիլհարմոնիայի համերգային դահլիճում]: 1947, հունվար-փետրվար, էջ 83:

650. **ՀԱՂԹԱՆԱԿԻ հուշարձանը**: [Քանաքեռի սարահարթի վրա կառուցման աշխատանքները սկսելու մասին]: 1947, սեպտ.-հոկտ., էջ 77:

651. **ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ցնծության օրեր**: [Հոկտեմբերյան հեղափոխության 30-ամյակի տոնակատարությունը]: 1947, նոյեմբ.-դեկտ., էջ 6—8:

652. **ՀԱՄԱՄԼԻԻ շաքարի գործարանը**: [Սպիտակի շրջանում: Առաջին արտադրանքը տալու մասին]: 1947, մարտ-ապրիլ, էջ 87—88:

Գործարանի լուսանկարը:

653. **ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ հայկական քոնկրեսը պանծալի մեկ էջը սփյուռքի հայության պատմության**: 1947, սեպտ.-հոկտ., էջ 66—69:

Բովանդ.՝ (**Պաշտոնական տեղեկություն**):—**Ճաշկերույթը և հրապարակային ժողովը**:—**Պատգամավորների ընդհանուր թիվը**:—**Ներկայացված կազմակերպություններու ամփոփում**:—**Համաշխարհային հայկական քոնկրեսի ստացած համազգային ընդունելությունը**: [Ստացված հեռագրեր]: **Արտասահմանի եկեղեցական առաջնորդներէ**:—**Պալքաններեն, Եվրոպայեն և Մերձավոր Արևելքեն**:—**Արևմտյան կիսագունդեն և Խաղաղական կղզիներեն**:

654. **ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՆԳՐԵՍԻ ԴԻՎԱՆ**:—**Քոնկրեսի դիմումը Միացյալ ազգերուն**: 1947, սեպտ.-հոկտ., էջ 64—65:

655. **ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ հայկական կոնգրեսի արձագանքը Ամերիկյան մամուլի և ռադիոյի մեջ**: 1947, հուլիս-օգոստ., էջ 35—36:

656. **ՀԱՄԱՌՈՏ օրագրություն համաշխարհային հայկական կոնգրեսի**: 1947, հուլիս-օգոստ., էջ 34—35:

657. **ՀԱՅ դպրոցները պետականացված**: [Բուլղարիայում]: 1947, նոյեմբ.-դեկտ., էջ 89:

658. **«ՀԱՅ եկեղեցական ժողովը Էջմիածնում» կինոնկարի մեծ հաջողությունը հայկական գաղութներում**: 1947, մայիս-հունիս, էջ 64—67:

Կինոժապավեն:

659. **ՀԱՅ կյանքը Եգիպտոսի մեջ**: [27.000 եգիպտահայերից ներգաղթի համար ցուցակագրվել են 12.000 մարդ]: 1947, մարտ-ապրիլ, էջ 89—90:

660. **ՀԱՅ մեծագույն լուսավորչի հիշատակին**: [Խաչատուր Աբովյանի արձանը Երևանի Աբովյանի հրապարակ-պուրակում կանգնեցնելու մասին]: 1947, սեպտ.-հոկտ., էջ 79:

Նկ. Խ. Աբովյանի արձանը Երևանի Աբովյանի հրապարակում:

661. **ՀԱՅԱՍՏԱՆԻ կերպարվեստագետների միությունում**: 1947, նոյեմբ.-դեկտ., էջ 83:

662. **ՀԱՅԱՍՏԱՆԻ կոլխոզների էլեկտրիֆիկացիան**: [Համառոտ տեղեկություններ]: 1947, հունվար-փետրվար, էջ 85:

663. **ՀԱՅԱՍՏԱՆԻ կոմպոզիտորները Հոկտեմբերի 30-ամյակին**: 1947, հուլիս-օգոստ., էջ 87:

664. **ՀԱՅԱՍՏԱՆԻ սովետական կոմպոզիտորների միությունում**: [Աշխատանքային ծրագրերի մասին]· 1947, հունվար-փետրվար, էջ 83:

665. **ՀԱՅԱՍՏԱՆԻ քաղաքների պլանավորումը**: [Արթիկ, Նոր-Բայազետ, Հոկտեմբերյան, Արտաշատ, Ծաղկաձոր: Նախագծերի մասին]: 1947, հուլիս-օգոստ., էջ 85—86:

666. **ՀԱՅԵՐԸ Վիեննայի և Լինցի մեջ**: 1947, հուլիս-օգոստ., էջ 91—92:

667. **ՀԱՅԵՐԻ հայրենադարձությունը ԱՄՆ-ից**: 1947, նոյեմբ.-դեկտ., էջ 33—34:

668. **ՀԱՅԵՐԻ հայրենադարձությունը Հունաստանից**: 1947, նոյեմբ.-դեկտ., էջ 35:

669. **ՀԱՅԵՐԻ ներգաղթը Եթովպիայից**: [Նաև գաղութահայ կյանքի մասին]: 1947, մայիս-հունիս, էջ 86:

670. **ՀԱՅԵՐԻ և վրացիների վերադարձը Ֆրանսիայից**: [Ներգաղթ]: 1947, սեպտ.-հոկտ., էջ 70:

671. **ՀԱՅԵՐՈՒ թիվը Անատոլուի մեջ**: [Վիճակագրական տվյալներ ըստ բնակավայրերի: Ընդհանուր թվով մոտ 20.000 հայեր]: 1947, սեպտ.-հոկտ., էջ 93—94:

672. **ՀԱՅԿԱԿԱՆ կյանքը Անդր-Հորդանանի մեջ**: [Վիճակագրական տվյալներ]: 1947, մայիս-հունիս, էջ 90—91:

673. **ՀԱՅԿԱԿԱՆ լուրեր**: [Ամերիկայի թերթերը նկարիչ **Սարգիս Խաչատրյանի** մահվան մասին]: 1947, մայիս-հունիս, էջ 90:

674. **ՀԱՅԿԱԿԱՆ լուրեր**: [Ամերիկյան «Թայմզ» թերթը **Արամ Խաչատրյանի** «Գայանե» բալետի մասին]: 1947, մայիս-հունիս, էջ 90:

675. **ՀԱՅԿԱԿԱՆ լուրեր**:—[Նիկողայոս Ադոնցի «Հայաստանի պատմություն» գիրքը ֆրանսերեն լեզվով Փարիզում հրատարակվելու մասին]: 1947, մայիս-հունիս, էջ 90:

676. **ՀԱՅԿԱԿԱՆ լուրեր: Ուրուգվայեն**: [Տեղի հայկական գաղութի մասին]: 1947, մայիս-հունիս, էջ 91:

677. **ՀԱՅԿԱԿԱՆ մարդահամար Նյու-Յորքի մեջ**: [Նախաձեռնությամբ Հայ Առաջնորդարանի]: 1947, նոյեմբ.-դեկտ., էջ 28:

678. **ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ Ակադեմիայում**: [Գիտությունների Ակադեմիայի կազմակերպման 3-ամյակի առթիվ]: 1947, հունվար-փետրվար, էջ 78—82:

Նկ. Հայկական ՍՍՀ Գիտ. Ակադ. շենքը:

679. **ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ Գերագույն Սովետի ընտրությունները**: 1947, հունվար-փետրվար, էջ 65—71:

Ստորագր.՝ Վ.:

Նկ.՝ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Տ. Տ. Գևորգ Զ քվեատուփի մոտ: էջ 73:

680. **ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ Գերագույն Սովետի նախագահության հրամանագիրը: Հայկական ՍՍՌ աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային սովետների ընտրությունները անցկացնելու մասին**: 1947, սեպտ.-հոկտ., էջ 75:

681. **ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ Գիտությունների Ակադե-**

**միայի դելեգացիայի մեկնումը Թբիլիսի:—Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի դելեգացիան Թբիլիսիում:** [Գիտական համատեղ աշխատանքի մասին]: 1947, նոյեմբ.-դեկտ., էջ 81—82:

**682. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի հոբելյանական սեսիան:** 1947, նոյեմբ.-դեկտ., էջ 79—81:

**683. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայում:** [Զեկուցումներ նվիրված Հարավային Հայաստանի պղնձա-մոլիբդենային հանքային բազայի պրոբլեմներին և Արարատյան դաշտավայրերի ճահճակալած և աղակալած հողերի յուրացման պրոբլեմին: Հաղորդագրություն՝ ՀՀԳ-ի]: 1947, հուլիս-օգոստ., էջ 83:

**684. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայում: Զրույց Ակադեմիայի պրեզիդենտ Վիկտոր Համբարձումյանի հետ:** 1947, նոյեմբ.-դեկտ., էջ 79:

**685. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայում:** [Նոր, աշխարհագրության ենթաբաժնի ստեղծում: Նաև՝ Ակադեմիայի փունդամենտալ գրադարանը Լենինգրադից ստացված նոր գրականությամբ համալրվելու մասին: Հաղորդագրություն ՀՀԳ-ի]: 1947, հուլիս-օգոստ., էջ 83—84:

**686. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ Մինիստրների Սովետում:** [Խաչատուր Աբովյանի 100-ամյակի առթիվ կազմակերպչական հանձնաժողովի կազմում]: 1947, նոյեմբ.-դեկտ., էջ 78:

**687. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ պետական արխիվի ուղեցույցը:** [Հրատարակության պատրաստելու մասին]: 1947, հունվար-փետրվար, էջ 85:

**688. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ-ի տեղական Սովետների ընտրությունները:** 1947, նոյեմբ.-դեկտ., էջ 36—41:

**689. ՀԱՅԿԱԿԱՆ քոնկրեսի դիմումնագիրը ներկայացվի Միացյալ ազգերուն:** 1947, սեպտ.-հոկտ., էջ 65:

**690. [ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ** արտիստուհի Թագուհի Քյոսեյանը Անուշի դերում: Բուխարեստից: Նկար]: 1947, հուլիս-օգոստ., էջ 18:

**691. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ բազմավաստակ մոր խոսքը:** [Աննա Դեյրեմեջյանին «Մայրական փառք» երկրորդ աստիճանով պարգևատրելու առթիվ]: 1947, մարտ-ապրիլ, էջ 83:

**692. [ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ** գորգագործներ Գյուրջի Պատրիկյանը և Սուլթան Ներսիսյանը Երգորգ արտելում]: 1947, հուլիս-օգոստ., էջ 21:

**693. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ կառուցողների երիտասարդական բրիգադան:** [Ղեկավարությամբ Ծ. Թումանյանի. Քաջարանշինի Հանքավան տեղամասում]: 1947, հուլիս-օգոստ., էջ 19—20:

**694. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ կոմպոզիտորի ստեղծագործությունները:** [Իննոս Վարդգես Հայրիկյանի ստեղծագործությունների մասին]: 1947, մայիս-հունիս, էջ 73:

**695. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ հայ նկարիչների գործերի ցուցահանդեսը:** [Ապրիլի 27-ին Երևանի նկարիչների տանը]: 1947, մարտ-ապրիլ, էջ 83—84:

Նկարիչների և քանդակագործների խմբանկար. Գ. Անարոնյան, Ա. Պարոնյան, Հ. Գալենց, Բ. Վարդանյան, Հ. Զոմյան, Թ. Բերբերյան, Մ. Մարգարյան, Ա. Կետիկյան, Հ. Ստեփանյան, Հ. Սաատրյան:

**696. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ հայերը արտադրության մեջ:** [Ալավերդում, Լենինականում, Ուզունլարում՝ այժմ Օձուն]: 1947, մարտ-ապրիլ, էջ 82:

**697. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ հայերը կոլխոզային արտադրության մեջ աշխատում են օրինակելի:** 1947, սեպտ.-հոկտ., էջ 78—79:

**698. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ հայերը շրջապատված են հոգատարությամբ:** 1947, հուլիս-օգոստ., էջ 12—13:

Նկ.՝ Երևան—Լիբանանից, Սիրիայից և Հունաստանից հայրենիք վերադարձած մի խումբ հայեր անհատական բնակարանային շինարարության համար հողամասեր են ստանում:

**699. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ հայերի բրիգադան:** [Կոտայքում, Բետոնագործ Չաթալչյան ընտանիքի մասին]: 1947, նոյեմբ.-դեկտ., էջ 78:

**700. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ հայերի երգեցիկ կապելլա:** 1947, մայիս-հունիս, էջ 74:

**701. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ հայերի երեկույթ զբոսանք:** [26 կոմիսարների անվան կուլտուրայի և հանգստի պարկում]: 1947, հուլիս-օգոստ., էջ 20—21:

**702. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ հայերի 1947 թվի քարավանների ժամանումը հայրենիք:** [Ներգաղթը՝ Սիրիայից, Լիբանանից, Հունաստանից: Տեղաբաշխումը՝ Երևան, Լենինական, Արտաշատ, Գորիս]: 1947, հուլիս-օգոստ., էջ 6—11:

Նկարներ՝ «Պոբեդա» ջերմանավով ժամանած հայրենադարձների մի խումբ Բաթումիի նավահանգստում:—Երևանի կայարանում—քաղսովետի գործկոմի նախագահ Ե. Վարդանյանը ողջունում է նորեկներին:—Երևանի կայարանում—քարավանի ղեկավար Հակոբ Թրյանը հայրենադարձների անունից ողջունում է մայրաքաղաքի աշխատավորությանը:

**703. [ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ** Ն. Պատրիկյանը և Երեմյանը էլեկտրոլուսավորության արմատուրայի գործարանում: Լուսանկար]: 1947, հուլիս-օգոստ., էջ 22:

**704. [ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ** ուսանողներ. Սմբատ Ղազարյանը և Գուրգեն Սարգսյանը: Պետ. համալսարանի հանրակացարանում: Նկար]: 1947, հուլիս-օգոստ., էջ 20:

**705. [ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ** Ս. Փափազյանը և Ն. Կալխակյանը Երևանի ժամացույցի գործարանում: Լուսանկար]: 1947, հուլիս-օգոստ., էջ 22:

**706. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ ստախանովականները:** [Երևանի գյուղգործիքների գործարանում]: 1947, նոյեմբ.-դեկտ., էջ 78:

**707. [ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ** ստախանովականներ: Թագուհի, Վարդուհի, Հովհաննես Փափազյանները Լենինականի տեքստիլ կոմբինատում: Նկար]: 1947, հուլիս-օգոստ., էջ 19:

**708. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՆԵՐԸ արտադրության առաջավորներ:** 1947, մայիս-հունիս, էջ 73:

**709. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՆԵՐԻ նոր խմբի ժամանում:** [Սիրիայից, Լիբանանից, Հայֆայից]: 1947, նոյեմբ.-դեկտ., էջ 34:

**710. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ և հարակից խնդիրների մասին:** [Արտասահմանում գտնվող հայ մշակույթի արժեքների կենտրոնացումը Սովետական Հայաստանում]: 1947, հուլիս-օգոստ., էջ 3—5:

**711. ՀԱՅՐԵՆԻ հողի վրա:** [Հայրենադարձ հայերը Աշտարակի շրջանի Բարձրաշեն գյուղում]: 1947, հուլիս-օգոստ., էջ 16:

**712. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Գ[ՐԻԳՈՐ]:—Բանաստեղծ Սմբատ Շահազիզի անտիպ նամակներից (1892—1899):** 1947, նոյեմբ.-դեկտ., էջ 59—74:

Շահազիզի դիմանկարով:

**713. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Գ[ՐԻԳՈՐ]:—Խաչատուր Աբովյանի և Ստեփանոս Նազարյանի կենսագրության շուրջը ստեղծված մի առեղծվածի լուծումը:** [Ուսումնասիրություն: Բնագրերի հրապարակումներ]: 1947, հուլիս-օգոստ., էջ 61—69:

Խաչատուր Աբովյանի, Ստեփանոս Նազարյանի դիմանկարներով:

**714. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Գ[ՐԻԳՈՐ]:—Կոմիտասի երկու նամակը:** [Ուսումնասիրություն: Բնագրեր]: 1947, մայիս-հունիս, էջ 59—63:

Բնագրեր՝ **Կոմիտաս վարդապետ Սողոմոնյան:—Վեհափառ հօրն Տ. Տ. Մկրտչի Ա. Սրբազնագոյն կաթողիկոսին Ամենայն Հայոց:—Սիրելի եղբայր հայր Կոմիտաս:** 1947, մայիս-հունիս, էջ 60—63:

Նկար՝ Կոմիտաս վարդապետը Ներսիսյան լճի մոտ: Գործ՝ նկարիչ Ե. Թադևոսյանի:

**715. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Գ[ՐԻԳՈՐ]:—1812 թվի Հայրենական պատերազմին հայերի մասնակցությա-**

**ներ վերաբերող փաստաթղթեր:** [Ուսումնասիրություն: Բնագրերի հրապարակում]: 1947, սեպտ.-հոկտ., էջ 17—38:

Բնագրեր՝ **Աստուծոյ ողորմութեամբն Մեք Պետրոս Առաջին, կայսր և ինքնակալ ամենայն Ռուսաց:** [1724 թ. նոյեմբերի 10-ին, հրապարակված հրովարտակ, որով ստանձնել է հայ ժողովրդի հովանավորությունը]:—**Աստուածային ողորմութեամբ Մեք Աղեքսանդր Առաջին Կայսր և ինքնակալ համայն Ռուսաց...** [Հրովարտակ]:—**Գերազնիվ աղա Դանիել Թորոսին: Իմ սիրեցեալ բարեկամ:** Ստորագր.՝ **Գրիգոր արքեպիսկոպոս Պ. Հայոց:** [Սույն նամակը ուղարկված է եղել Իռաստանի թեմի առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոսին, վերջինս ուղարկել է Ներսես արքեպիսկոպոսին]:—**Յաջորդ Մանուէլ վարդապետէ հրաման Հոգեւոր կառավարութեան Գրիգորիոպոլու:—Բարձր Սրբազան Ներսէս արքեպիսկոպոս Գերամեծար եղբայր իմ ի Քրիստոս:** Ստորագր.՝ **Հովհաննէս արքեպիսկոպոս Հայոցս Ռուսաստանու:** [Հովհաննես արքեպիսկոպոսին Ս. Սինոդի առաջին աստիճանի շքանշանով պարգևատրելու մասին]:—**Սրբազնագոյն պետ՝ ողորմած Տէր իմ:** Ստորագր.՝ **Օսիպ Գեոզիդավլով:** [Նամակ ուղղված Վրաստանի թեմի առաջնորդ Ներսես արքեպիսկոպոսին, կից գրությամբ]:—**«Ի 3-է մարտի գրեցելովն ծանուցանէ առ իս պայծառափայլ կնէազ Գոլիցինն՝ թէ...»:** Ստորագր.՝ **Յովհաննէս արքեպիսկոպոս Հայոցս Ռուսաստանու:—«Ցուցակ սրբազնագործ հոգևորականաց Ծփխրսայ և Հավաբարայ՝ վասն 1842 ամի»:** [1842 թ. հաղթանակի խաչերով պարգևատրված հոգևորականների]:

Նույն տեղում: Հավելված: **ԵՓՐԵՄ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:—Եփրեմ կաթողիկոսի նամակը: Յիսուսի Քրիստոսի ծառայ և շնորհիւ նորին Տէր Եփրեմ կաթողիկոս Ամենայն Հայոց և ծայրագոյն պատրիարգ առաքելական եկեղեցւոյ Քրիստոսի եւ բարձրագահ Մայր Աթոռոյ կաթուղիկէ Էջմիածնի:** [Կոնդակը գրված է 1815 թ. սեպտեմբերի 25-ին, ուղղված է Գրիգոր արքեպիսկոպոս Զաքարյանին]: էջ 36—38:

Եփրեմ կաթողիկոսի դիմանկարով:

**716. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Գ[ՐԻԳՈՐ]:—Նորահայտ նյութեր Մեսրոպ Թաղիադյանի մասին:** [Ուսումնասիրություն և փաստաթղթերի հրապարակումներ]: 1947, մարտ-ապրիլ, էջ 31—43:

**717. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Գ[ՐԻԳՈՐ]:—Սայաթ-Նովայի «Գեղն ու չոբանը» խաղի մի նոր վարիանտը:** 1947, մայիս-հունիս, էջ 55—56:

Նկ.՝ Սայաթ-Նովա, գործ՝ նկարիչ Հ. Ռուխկյանի:

**718. ՀԵԼԼԵՆ ազգային-ազատագրական ճակատի [Էամ] օրգան «Էլեֆթերի էլլասս»-ն հայերի ներգաղթի մասին:** 1947, հունվար-փետրվար, էջ 75—77:

Ստորագր.՝ Հայացուց Ա.:

**719. ՀԵԾԱՆԻՎՆԵՐԻ գործարան:** [Լենինականում: Շինարարությունը սկսելու մասին]: 1947, մայիս-հունիս, էջ 81:

**720. ՀԶՈՐ սառցարան:** [Երևանում: Կառուցվելու մասին]: 1947, սեպտ.-հոկտ., էջ 83:

**721. ՀՆԱԴԱՐՅԱՆ իրեր Կարմիր բլուրում:** 1947, հուլիս-օգոստ., էջ 86—87:

**722. ՀՆԱՐԱՄԻՏ եգիպտահայու մը հորինած մեքենան:** [Նավթայրիչի մաս]: 1947, հունվար-փետրվար, էջ 94:

**723. ՀՆԴԿԱՍՏԱՆԻ հայ գաղութը:** [Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանի մասին]: 1947, հունվար-փետրվար, էջ 94:

**724. ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ երեկո նվիրված կոմպոզիտոր Անուշավան Տեր-Ղևոնդյանի ծննդյան 60-ամյակին:** 1947, մարտ-ապրիլ, էջ 85—86:

**725. ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ փոստանիշներ Խաչատուր Աբովյանի 100-ամյակի առթիվ:** 1947, նոյեմբ.-դեկտ., էջ 79:

**726. ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ սովետական նոր քաղաքացիների նկատմամբ:** [Կոտայքում, Արաբկիրում, Ալավերդիում, հայրենադարձների համար նոր բնակարանների շինարարություն]: 1947, նոյեմբ.-դեկտ., էջ 77:

**727. ՀՈԳԵՎՈՐ հովիվ Պելճիքայի հայոց:** [Պսակ քահանա Ստեփանյանի, Կ. Պոլսից իր պաշտոնատեղին՝ Բելգիա մեկնելու մասին]: 1947, նոյեմբ.-դեկտ., էջ 27:

**728. ՀՈԼԱՆՏԱՅԻ հայ գաղութը:** [Ազգային-եկեղեցական կյանքի մասին]: 1947, մայիս-հունիս, էջ 92—93:

Ստորագր.՝ Հայրապետական պատվիրակության դիվան:

**729. ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ռեվոլյուցիայի 30-ամյակին նվիրված ցուցահանդես:** [Երևանի նկարիչների տանը]: 1947, նոյեմբ.-դեկտ., էջ 83:

**730. ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ սոցիալիստական մեծ ռևոլյուցիայի 30-ամյակի տոնակատարությունը Հայաստանում: Երևանում:—Լենինականում:—Ալավերդիում:—Կիրովականում:— Ղափանում:** 1947, նոյեմբ.-դեկտ., էջ 13—15:

**731. Հ[ՐԱՉՅԱ] Աճառյանի նոր աշխատությունները:** [Հայոց լեզվի պատմության Բ հատորը, «Գրաբարի ուսուցիչ» և «Քննություն Համշենի բարբառի» աշխատությունները]: 1947, մայիս-հունիս, էջ 78:

**732. ՃԱՇԿԵՐՈՒՅԹ Միխայ (Միհայ) թագավորի մոտ ի պատիվ պատրիարք Ալեքսիի:** [Բուխարեստում]: 1947, մայիս-հունիս, էջ 15:

**733. [ՄԱԶԼՈՒՄՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ]:—Հունաստանի թեմի առաջնորդը ներգաղթի մասին:** 1947, մարտ-ապրիլ, էջ 19:

**734. ՄԱԼԽԱՍՅԱՆ ՍՏԵՓԱՆ:—Գրիգոր Նարեկացի:** [Ուսումնասիրություն]: 1947, մայիս-հունիս, էջ 31—42:

Նարեկացու նկարը:

**735. ՄԱԼԽԱՍՅԱՆՑ Ստեփան:** [Մահախոսական-կենսագրական]: 1947, հուլիս-օգոստ., էջ 26—27:

Դիմանկարով:

**736. ՄԱԼԽԱՍՅԱՆՑ Ստեփան Սարգսի:** [Մահվան առթիվ ցավակցական հեռագրեր]: 1947, հուլիս-օգոստ., էջ 25:

Բովանդ.՝ Ծայրագույն պատրիարք և Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Զ-ից:—Գերագույն Հոգևոր խորհրդից:—Էջմիածնի Հոգևոր Ճեմարանից:—«Էջմիածին» ամսագրի խմբագրությունից:

**737. ՄԱԼԽԱՍՅԱՆՑ ՍՏԵՓԱՆ:—Տանն Կիլիկիո վեհափառ կաթողիկոս Տ. Տ. Գարեգին Ա-ի ծննդյան 80-ամյա հոբելյանը:** [Կենսագրական ակնարկ]: 1947, հունվար—փետրվար, էջ 19—20:

**738. ՄԱՀ և հուղարկավորություն Երուսաղեմի պատրիարքական փոխանորդ գեր. Գևորգ վարդապետ Ճանըզյանի:** [Հաղորդագրություն՝ «Արաքս», 1947, № 26]: 1947, սեպտ.-հոկտ., էջ 45—46:

**739. ՄԱՅՐ ԱԹՈՌ:** 1947, հունվար-փետրվար, էջ 27:

Բովանդ.՝ [Հայրապետական հանդիսավոր մաղթանք նոր տարվա առթիվ]:—[Ամանորի և ս. Ծննդյան տոների առթիվ հեռագրերի ստացում]:—[Պատարագ՝ Վարդանանց տոնի առթիվ]:—[Ս. Վարդանանց տոնի օրը ճեմարանում գրական-գեղարվեստական երեկույթ]:—[Չիկագոյի Հայաստանյայց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուց նվիրատվություն ներգաղթին]:—[Կոնդակ գոհունակության՝ Ս. Էջմիածնի հիմնադրամի Լոնդոնի կենտրոնական հանձնաժողովին: Ս. Լուսավորչի Ա կարգի ադամանդազարդ շքանշան կրելու իրավունք հանձնաժողովի նախագահ՝ Կարապետ Տիլպերին և գործադիր մարմնի նախագահ՝ Տ. Հ. Մելքումին]:

**740. ՄԱՅՐ ԱԹՈՌ.** 1947, մարտ-ապրիլ, էջ 15:

Բովանդ.՝ [Մարտի 30-ին Ծաղկազարդի տոնի օրը

հանդիսավոր պատարագ Մայր Տաճարում]:—[Ապրիլի 3-ին, Ավագ հինգշաբթի օրը, պատարագ]:—[Ապրիլի 6-ին, Հարության տոնի օրը ս. պատարագ:—[Մարտի 22-ին Ռումինիայի հայոց թեմի ժամանակավոր առաջնորդ Սուրեն եպիսկոպոս Թորոսյանի ժամանումը Մայր Աթոռ]:—[Ապրիլի 1-ին Գարեգին ավագ քահանա Տեր-Հակոբյանին աբեղայի կոչման շնորհում]:

**741. ՄԱՅՐ ԱԹՈՌ:** 1947, մայիս-հունիս, էջ 11:

Բովանդ.՝ [Հանդիսավոր պատարագ Մայր Տաճարում, Գևորգ Զ-ի գահակալության երկրորդ տարեդարձի առթիվ]:—[Հունիսի 8-ին Մայր Տաճարում, ս. Էջմիածնի տոնի օրը պատարագ]:—[Հունիսի 26-ին, պատարագ Թարգմանչաց տոնի առթիվ]:—[Հանդիսավոր պատարագներ, ս. Գայանեի, ս. Հռիփսիմեի, ս. Շողակաթի վանքերում]:—[Հունիսի 22-ին, հոգեհանգիստ Կ. Պոլսի նախկին պատրիարք Զավեն արքեպիսկոպոս Տեր-Եղիայանի հիշատակին]:—[Հունիսի 30-ին Ճեմարանի տարեվերջյան քննությունները]. մասնակցությամբ Ստ. Մալխասյանի, Ե. Չահազիզի և այլոց:

**742. ՄԱՅՐ ԱԹՈՌ:** 1947, հուլիս-օգոստ., էջ 23:

Բովանդ.՝ [Հուլիսի 13-ին, Գևորգ Զ-ի մեկնումը Կիսլովոդսկ: Բուժման նպատակով]:—[Հուլիսի 13-ին, հանդիսավոր պատարագ Վարդավառի տոնի առթիվ]:—[Մայր Տաճարում, օգոստոսի 17-ին հանդիսավոր պատարագ վերափոխման տոնի առթիվ]:—[Կաթողիկոսի կարգադրությամբ, Սահակ վարդապետ Տեր-Հովհաննիսյանի մեկնումը Բաքու, հայկական եկեղեցում պատարագ մատուցելու համար]:—[Գարեգին վարդապետ Հակոբյանին, Շիրակի թեմի ժամանակավոր փոխ թեմակալ նշանակելու մասին]:—[Ճեմարանի ուսանողության, ղեկավարությամբ տեսուչ Մինաս Մինասյանի, Երևան էքսկուրսիա մեկնելու մասին]:

**743. ՄԱՅՐ ԱԹՈՌ:** 1947, սեպտ.-հոկտ., էջ 40—42:

Բովանդ.՝ [Սեպտեմբերի 27-ին Մայր Տաճարում հանդիսավոր պատարագ Գևորգ Զ-ի անվանակոչության տոնի առթիվ]:—[Սեպտեմբերի 25-ին հանդիսավոր նիստ ճեմարանում, երկրորդ ուսումնական տարվա առթիվ]:—[Անդրկովկասյան վիրաբուժների 3-րդ համագումարի մասնակիցների այցելությունը Մայր Տաճար]:—[Հոկտեմբերի 11-ին Թարգմանչաց տոնի առթիվ գրական-գեղարվեստական երեկո Ճեմարանում]:—[Հոկտեմբերի 12-ին Մայր Աթոռ այցելեցին ՀՍՍՀ մուսուլմանների կրոնական պետ Ղազի Շեյխ Ալասկյար Մահառալամովը և նրա տեղակալ՝ Միրզա Ալակպեր Բայրամովը]:—[Գևորգ Զ-ի ցավակցական հայտարարությունը Եղիշե վարդապետ Հարությունյանի մահվան առթիվ]:—Էջմիածին: Ծայրագույն պատրիարք և Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Զ-ին: [ՀՍՍՀ Մինիստրների Սովետին կից հայ եկեղեցու գործերի խորհրդի ցավակցական հեռագիրը Եղիշե վարդապետ Հարությունյանի մահվան առթիվ]:—[Ցավակցական հայտարարություններ Գերագույն հոգևոր խորհրդից, Ճեմարանից, «Էջմիածին» ամսագրի խմբագրությունից, Եղիշե վարդապետ Հարությունյանի մահվան առթիվ]:

**744. ՄԱՅՐ ԱԹՈՌ:** 1947, նոյեմբ.-դեկտ., էջ 19—20:

Բովանդ.՝ [Նոյեմբերի 7-ին Մայր Տաճարում հանդիսավոր պատարագ Հոկտեմբերյան հեղափոխության 30-րդ տարեդարձի առթիվ]:—[Հանդիսավոր նիստ ճեմարանում նվիրված Հոկտեմբերյան հեղափոխության 30-ամյակին]:—[Հանդիսավոր պատարագ Մայր Տաճարում Սովետական Հայաստանի 27-րդ տարեդարձի առթիվ]:—[Սովետական Հայաստանի 27-րդ տարեդարձի առթիվ Գևորգ Զ-ի կողմից շնորհավորական հեռագրերի առաքում]:—[Նոյեմբերի 29-ին հանդիսավոր նիստ ճեմարանում նվիրված Սովետական Հայաստանի 27-րդ տարեդարձին]:—[Դեկտեմբերի 18-ին Մայր Աթոռի միաբանության, ճեմարանի ուսանողության և վանքի բնակիչների հանդիպումը տեղական Սովետների դեպուտատության թեկնածուների հետ]:—[Սահակ վարդապետ Տեր-Հովհաննիսյանին ծայրագույն վարդապետության աստիճան շնորհելու մասին]:—[Մայր Աթոռի միաբանության ներկայացուցիչների մասնակցությունը, Երևանում, Ղազի շեյխ Ալասկյարի սգո արարողությանը]:

**745. ՄԱՆՈՒԿՅԱՆ Հ.:—Ջվիցերիո հայ գաղութը երեկ և այսօր:** 1947, հուլիս-օգոստ., էջ 92—93:

**746. ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՄԻՏԻՆԳ: Նյուր-Յորքում նվիրված Հայկական համաշխարհային կոնգրեսի սեսիային:** 1947, մայիս-հունիս, էջ 83:

Միտինգի մասնակիցները միաձայն բանաձև ընդունեցին, պահանջելով, որ Միավորված Ազգերի կազմակերպությունը արդարացի կերպով կարգավորի հայերի տերիտորիալ պահանջները՝ թուրքերի գրաված հայկական նահանգների նկատմամբ:

**747. ՄԱՐՄԱՐՅԱՆ Հ.:—Տպավորություններ Ջվիցերիայից:** [Տեղի հայկական գաղութի և հայերի հայրենասիրական զգացմունքների մասին]: 1947, սեպտ.-հոկտ., էջ 85—86:

**748. ՄԱՐՍԵԼԱՀԱՅ կյանք:** [Ներգաղթի մասին]: 1947, մարտ-ապրիլ, էջ 91:

**749. ՄԵՍՐՈՊ Թաղիադյան:** [Ուսումնասիրություն]: 1947, հունվար-փետրվար, էջ 55—58:

Ստորագր.՝ Շ. Էդ.:

**750. ՄԵՍՐՈՊՅԱՆ ՏԻԳՐԱՆ.:—Դերաշնորհ Արտավազդ [Սուրմեյան] արքեպիսկոպոսի Կրոնական այցելությունը:** [Քարոզ հայապահպանման մասին]: 1947, հուլիս-օգոստ., էջ 31—33:

Նկ.՝ 1945 թ. Ազգային եկեղեցական ժողովի օրերին Գևորգ Զ և Արտավազդ արքեպիսկոպոսը վանքի պարտեզում:

**751. ՄԵՐ սփյուռքյան եղբայրների նամակները: Ներգաղթի կոմիտեին: [Հալեպից, Հարավային Ամերիկայից, Մոնտեվիդեոյից, Բաղդադից, Թավրիզից:** [Խնդրանք՝ հայրենիք վերադառնալու համար]: 1947, մայիս-հունիս, էջ 74—76:

**752. ՄԸՍՐԼՅԱՆ Գ.:—Հայ զորաբանակներ Եգիպտոսի մեջ:** [Միջին դարերում]: 1947, հունվար-փետրվար, էջ 43—45:

**753. ՄԻԿՐՈԳԷՍԵՐԸ շահագործման հանձնվեցին:** [Սպիտակի շրջանի և Կրասնոսելսկի Չայքենդ գյուղում]: 1947, հուլիս-օգոստ., էջ 85:

**754. ՄԻՆԱՍՅԱՆ Մինաս:—Գոհաբանական մաղթանք 500-ամյակի առթիվ Ֆրքշանում:** [Ամենայն Հայոց Հայրապետության Աթոռը Սսից Էջմիածին տեղափոխելու 500-ամյակի առթիվ]: 1947, նոյեմ.-դեկտ., էջ 29:

**755. ՄԻՆԱՍՅԱՆ Մինաս:—Զավեն արքեպիսկոպոս Տեր-Եղիայան:** [Կ. Պոլսի նախկին պատրիարք: Մահախոսական]: 1947, մայիս-հունիս, էջ 12—14:

Դիմանկարով:

**756. ՄԻՆԱՍՅԱՆ ՄԻՆԱՍ:—Էջմիածնի հոգևոր ճեմարանը ուսման երկրորդ տարում:** 1947, հուլիս-օգոստ., էջ 28—30:

Երկու խմբանկար:

**757. ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ռեսպուբլիկաների Գիտությունների Ակադեմիաների գիտական գործունեությունը համաձայնեցնող խորհրդի պլենումում:** [Բացումը՝ ապրիլի 27-ին Մոսկվայում: ՀՍՍՌ-ից՝ Վ. Համբարձումյանի զեկուցումը]: 1947, մարտ-ապրիլ, էջ 86—87:

**758. ՄԻՐԱՔՅԱՆ Վ.:—Նամակ Երևանից:** [Գերագույն Սովետի ընտրությունների առթիվ հայրենադարձի նամակը արտասահման]: 1947, հունվար-փետրվար, էջ 71—73:

**759. ՄԻՐԻՃԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ:—Պիտի չարտոնենք երբեք, որ մեր իրավունքները մոռացվեն:** [Համաշխարհային հայկական կոնգրեսի կազմակերպ-

պական հանձնաժողովի ատենապետի ճառը, արտասանված կոնգրեսի առաջին նիստում]: 1947, հուլիս-օգոստ., էջ 40—43:

**760. ՄՈՍԿՎԱՅԻ 800-ամյակի տոնակատարությունը Հայաստանում: Երևանում:—Լենինականում:—Էջմիածնում:** 1947, սեպտ.-հոկտ., էջ 75—76:

**761. ՄՈՍԿՎԱՅԻ 800-ամյակը: 1147—1947:** [Պատմական ակնարկ]: 1947, սեպտ.-հոկտ., էջ 4—16:

**762. ՄՈՍԿՎԱՅԻ և Համայն Ռուսիո պատրիարք ամենապատիվ Ալեքսի սրբազանը Պուքրեշի [Բուխարեստ] Հայոց եկեղեցին կայցելե:** 1947, սեպտ.-հոկտ., էջ 48—53:

Բովանդ.՝ **Առաջնորդական փոխանորդ տ. Վազգեն վարդապետի [Պալճյան] բարի գալուստի խոսքը:—Նորին սրբություն Ալեքսի պատրիարքի խոսքը:—Հայաստանյան ճակատի կեդրոնական կոմիտեի նախագահ Վահան Դանիելյանի խոսքը:**

Ստորագր.՝ Ա(րտաշես) Տ(իրացյան):

Նկ.՝ Նորին սրբություն Ալեքսի Մոսկվայի և Համայն Ռուսիո պատրիարք:—Ալեքսի պատրիարքը հայ Մշակույթի տան Ռսկյա մատյանի մեջ արձանագրում է իր այցելության մասին: [Ալեքսի պատրիարք և Վազգեն ծ. վարդապետ]:

**763. ՄՈՍԿՎԱՅԻ և Համայն Ռուսիո պատրիարք Ալեքսիի մեկնումը Ռումինիա:** 1947, մայիս-հունիս, էջ 15:

**764. ՄՈՍԿՎԱՅԻ և Համայն Ռուսիո պատրիարք Ալեքսիի վերադարձը Մոսկվա:** [Ռումինիայից]: 1947, մայիս-հունիս, էջ 15:

**765. ՄՈՐԻՍ Սարգիսոֆ մեռած:** [Ժնևի գեղարվեստի վարժարանի ուսուցիչ]: 1947, հունվար-փետրվար, էջ 94:

**766. ՅՈՒԿՈՍԼԱՎՆԵՐՈՒՆ սիրելի հայ հերոսը:** [Բելգրադի խոշոր հրապարակներից մեկում, 2-րդ համաշխարհային պատերազմի մասնակից, **հայազգի մայոր Լիլոյանի հուշարձան-շիրիմի մասին]:** 1947, սեպտ.-հոկտ., էջ 91—92:

**767. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ են հայրենադարձների նոր խմբերի ընդունում:** [Շահումյանի անվան կոլխոզում]: 1947, մարտ-ապրիլ, էջ 79:

**768. ՆԱՄԱԿ Կալկաթայից: (Քաղված մի մասնավոր նամակից, որ ստացվել է Թեհրանում 1947 թ. հունվարի 5-ին):** 1947, մարտ-ապրիլ, էջ 91—93:

**769. ՆԱՄԱԿ Տիարպագըրեն:** [Տեղի հայերի մասին]: 1947, մայիս-հունիս, էջ 91—92:

**770. ՆԵՐԿԵՐԻ և լաքի գործարանը գործարկման նախօրյակին:** 1947, հուլիս-օգոստ., էջ 85:

**771. [ՆԵՐՍՈՅԱՆ] ՏԻՐԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ (Առաջնորդ Հայոց Ամերիկայի):—Կոչ հայրենադարձության:** 1947, նոյեմբ.-դեկտ., էջ 31—32:

**772. ՆԿԱՐԻՉ Արշակ Ֆետվաճյանի մահը:** [Նաև՝ նկարչի կտակը, իր ստեղծագործությունները Խորհրդային Հայաստանին կտակելու մասին]: 1947, նոյեմբ.-դեկտ., էջ 89:

**773. ՆՅՈՒ-ՅՈՐՔԻ Հայկական համաշխարհային կոնգրեսում:** [Աշխատանքի նպատակն էր՝ «կորցրած հայկական տերիտորիայի ազատագրումը և նրա վերամիավորումը Սովետական Հայաստանին»: Նաև՝ օգնության կազմակերպում հայրենադարձությանը և այլ մշակութային հարցեր]: 1947, մայիս-հունիս, էջ 82—83:

**774. ՆՈՐ ավան:** [Վեդիի շրջանում: Հայրենադարձ հայերի համար: Շինարարություն]: 1947, մարտ-ապրիլ, էջ 78—79:

**775. ՆՈՐ բնակարաններ հայրենադարձ հայերի համար Ստեփանավանում:** 1947, մարտ-ապրիլ, էջ 79:

**776. ՆՈՐ գիտա-հետազոտական հիմնարկություններ:** [ՀՍՍՀ Գիտությունների Ակադեմիային կից Երևանում կազմակերպված արվեստների պատմության բաժին և փիլիսոփայական, գիտա-հետազոտական ինստիտուտ. կազմակերպման մասին]: 1947, մայիս-հունիս, էջ 78:

**777. ՆՈՐ գործարաններ:** [Երևանում: Կառուցման մասին: Հախճապակու, Կոշիկի 3-րդ, կահույքի և այլ: Լենինականում՝ Մետաղամշակման, փայտամշակման, մետաքսի]: 1947, սեպտ.-հոկտ., էջ 83—84:

**778. ՆՈՐ երգեցիկ կապելլա:** [Հայֆիլհարմոնիայում, քառաձայն խմբի կազմակերպման մասին]: 1947, մայիս-հունիս, էջ 77:

**779. ՆՈՐ հողերի յուրացում:** [Բասարգեչարի, այժմյան Վարդենիսի շրջանում]: 1947, սեպտ.-հոկտ., էջ 82:

**780. ՆՈՐ ջրմուղ Էջմիածնում:** 1947, հուլիս-օգոստ., էջ 86:

**781. ՆՈՐ սանատորիաներ:** [Հայաստանում]: 1947, սեպտ.-հոկտ., էջ 84:

**782. ՆՈՐ տարի:** 1947, հունվար-փետրվար, էջ 5—7:

**783. ՆՈՐ տներ:** [Հայրենադարձ հայերի համար]: 1947, մայիս-հունիս, էջ 73:

**784. ՆՈՐ օպերաներ:** [Համառոտ տեղեկություններ: Հարո Ստեփանյանի «Նունե», Ա. Հովհաննիսյանի «Պեպո», Կ. Զաքարյանի «Աղասի» և այլ օպերաների մասին]: 1947, հունվար-փետրվար, էջ 82:

**785. ՆՈՐՎԵԳԱ-ՍՈՎԵՏԱԿԱՆ բարեկամության ընկերության դելեգացիան Երևանում:** [Դելեգացիայի ղեկավար Խարալդ Խալոյի տպավորությունները Հայաստանից]: 1947, սեպտ.-հոկտ., էջ 73—74:

Նկ.՝ Նորվեգա-Սովետական ընկերության դելեգացիան Էջմիածնում:

**786. ՆՈՒՐՀԱՆ Ա.:—«Երիտասարդ Հայաստան»-ը:** [«Էջմիածին» ամսագրի խմբագրականի մասին]: 1947, հուլիս-օգոստ., էջ 94:

**787. ՆՊԱՍՏ հայրենադարձ բազմազավակ մայրերին:** 1947, մայիս-հունիս, էջ 73:

**788. ՇԱԼՃՅԱՆ Ա.:—Լուրեր Գահիրեեն:** [Ներգաղթի մասին]: 1947, մարտ-ապրիլ, էջ 91:

**789. ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ են հանձնվում կույտուրայի նոր ակումբներ:** 1947, նոյեմբ.-դեկտ., էջ 84:

Նկ.՝ Ներքին Ախտայի կոլխոզային ակումբը:

**790. ՇԱՀԱԶԻԶ ԵՐՎԱՆԴ:—Բանաստեղծ Սմբատ Շահազիզը և նրա անվան հետ կապված անտիպ նամակներից:** [Ուսումնասիրություն: Բնագրեր]: 1947, հուլիս-օգոստ., էջ 70—78:

Բովանդ.՝ Սարգիս Ջանումյանի նամակը Արիստակես արքեպիսկոպոս Սեդրակյանին:—Սմբատ Շահազիզի նամակը Սարգիս Ջանումյանին:—Սմբատ Շահազիզի նամակը Երվանդ Շահազիզին:—Բանաստեղծ Ալեքսանդր Ծատուրյանի նամակը Մկրտիչ Բարխուդարյանին:—[Սմբատ Շահազիզ] Պոետ [Զափածո]:

Նկ.՝ Սմբատ Շահազիզ:—Ալեքսանդր Ծատուրյան:

**791. ՇԱՀԱԶԻԶ ԵՐՎԱՆԴ:—Գիտնական Մկրտիչ Էմինի նամակները հասցեագրված Սարգիս Խորասանյանին (1874—1887):—Պատանի Մկրտիչ Էմինի ճանապարհորդությունը Կալկաթայից Մոսկվա:** 1947, նոյեմբ.-դեկտ., էջ 42—58:

Էմինի դիմանկարով:

**792. ՇԱՀԱԶԻԶ ԵՐՎԱՆԴ:—Գևորգ Դոդոխյանը և նրա «Ծիծեռնակը»:** [Կյանքի և գրական գործունեության մասին]: 1947, հունվար-փետրվար, էջ 59—64, մարտ-ապրիլ, էջ 45—60:

Դոդոխյանի դիմանկարով:

**793. ՇԱՀԱԶԻԶ ԵՐՎԱՆԴ:—Իմ հուշերից: ա. Սաշկա Դավիդով:** [Ալեքսանդր Դավթյան—երգիչ]:—**Ռափայել Պատկանյանի բժիշկ՝ պրոֆեսոր Ղազարոս Թոմասը:** [Նաև՝ Ղ. Թոմասի «Հավերժական հարցը» բանաստեղծությունը] ռուսերեն և հայերեն: 1947, սեպտ.-հոկտ., էջ 55—61:

Նկ.՝ Իսաֆայել Պատկանյանը և պրոֆ. Ղազարոս Թումայը:

**794. ԾԱՀԱԶԻԶ ԵՐՎԱՆԴ:—Կաթողիկոսական կոնդակներ և օրհնության թղթեր:** [Ուսումնասիրություն: Բնագրեր]: 1947, մայիս-հունիս, էջ 26—28:

**795. ԾԱՀԱԶԻԶ ԵՐՎԱՆԴ:—Մագաղաթ:** [Օգտագործման և պատրաստման տեխնոլոգիայի մասին]: 1947, մայիս-հունիս, էջ 29—30:

**796. ԾԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ է հայրենադարձ հայերի 1947 թվի քարավանների ժամանումը հայրենիք:** [Կահիրեից, Բեյրութից, Սիրիայից, Լիբանանից, Փարիզից, Հունաստանից, Եգիպտոսից]: 1947, սեպտ.-հոկտ., էջ 70—72:

**797. ԾԵՔՍՊԻՐԻ կատակերգությունների հայերեն հրատարակությունները ուղարկված է Բիրմինգհամի գրադարանին:** 1947, հուլիս-օգոստ., էջ 87:

**798. ԾԻՐՎԱՆԶԱԴԵԻ «Իշխանուհի» դրաման:** [Այրված համարված ձեռագիրը, Հայաստանի պետական թատերական թանգարանում, հայտնաբերվելու մասին]: 1947, մայիս-հունիս, էջ 78:

**799. ԾՆՈՐՀԱԼԻ մասնագետ:** [Արծաթագործ Արև Ասլանյանի մասին]: 1947, մայիս-հունիս, էջ 74:

**800. ԾՔԵՂ ընդունելություն:** [Նյու-Յորքի Սովետական հյուպատոսարանում: Սովետական Հայաստանի 26-րդ տարեդարձի առթիվ]: 1947, մարտ-ապրիլ, էջ 92:

**801. ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ մը դեպի Հայտ Փարք:** [Համաշխարհային հայկական կոնգրեսի պատգամավորների այցը Ռուզվելտի դամբարանին]: 1947, հուլիս-օգոստ., էջ 36—37:

**802. ՈՒՐՖԱԼՅԱՆ ՏԱՃԱՏ ՎԱՐԴԱՊԵՏ (միաբան ուխտին Կիլիկիո):—Տաճատ վարդապետ Ուրֆալյանի նամակը Փարիզի «Արևմուտք» թերթի խմբագրին:** [«Օգնենք Կիլիկիո կաթողիկոսին» հոդվածի առթիվ: Նաև Կիլիկյան կաթողիկոսության հոգևոր և մշակութային կյանքի մասին]: 1947, սեպտ.-հոկտ., էջ 45—48:

**803. ՉԻՆԱԿԱՆ գրող Մաո-Դունը հայ ժողովրդի մասին:** [Տպավորություններ Սովետական Հայաստանից]: 1947, մայիս-հունիս, էջ 72:

**804. ՉԻՆԱԿԱՆ գրող պարոն Մաո-Դունը Երևանում:** 1947, հունվար-փետրվար, էջ 84:

**805. ՊԱԳԱԼՅԱՆ ԲԱԳՐԱՏ:—Պ. Բագրատ Պագալյանը իր Էջմիածին կատարած այցելության մասին:** [Բեյրութահայի տպավորությունները]: 1947, նոյեմբեր-դեկտ., էջ 27:

**806. ՊՈԼՍՈ նախկին պատրիարք Տ. Զավեն արքեպիսկոպոս Տեր-Եղիայանի թաղումը:** 1947, սեպտ.-հոկտ., էջ 45:

**807. ՊԱՀԱԾՈՆԵՐԻ գործարան Սևանում:** [Զըկան]: 1947, մայիս-հունիս, էջ 81:

**808. [ՊԱՊՈՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ]:—Ռումանիո հայ գաղութը:** [Վիճակագրական տվյալներ ռումինահայ գաղութի մասին]: 1947, սեպտ.-հոկտ., էջ 86—88:

**809. ՊԱՐՈԹ ՌԸՆԵ:—Զարեհ Մութաֆյան, ձըկնորսը, նկարիչ, Պուըթանիո մեջ գտած է իր Հայաստանի երանգները: (Այս վերնագրին տակ «Լիբերասիոն» մեծ օրաթերթը իր 2 հոկտեմբերի թվով, մեր տաղանդավոր նկարիչ Զ. Մութաֆյանի մասին կհրատարակե հետագա հոդվածը):** 1947, նոյեմբ.-դեկտ., էջ 75—76:

**810. ՊԱՐՈՆ Բ. Բաքալյանի այցելությունը Մայր Աթոռ:** [Ազգօգուտ գործունեության և ներգաղթին օգնելու համար ս. Լուսավորչի Ա կարգի ադամանդակուռ շքանշանով պարգևատրելու մասին]: 1947, հունվար-փետրվար, էջ 21:

Դիմանկարով:

**811. ՊԱՏՄԱԿԱՆ հուշարձանների պահպանությունը:** [Հուշարձանների պահպանության կոմիտեի արշավախմբի մեկնումը Ալավերդի, Աշտարակ, Թալին: Նաև՝ վերանորոգման նպատակով պետության կողմից մեկ միլիոն 200 հազար ռուբլի տրամադրելու մասին]: 1947, մայիս-հունիս, էջ 79:

**812. ՊԵԼԿՐԱՏԻ հայ գաղութը:** 1947, սեպտ.-հոկտ., էջ 91:

**813. ՊԵԼԿՐԱՏԻ հայերը:** [Տեղի հայկական գաղութի մասին]: 1947, մայիս-հունիս, էջ 92:

**814. ՊԵԼՃԻՔԱՅԻ [Բելգիայի] հայ գաղութին կյանքը:** 1947, սեպտ.-հոկտ., էջ 88—90:

Ստորագր.՝ **Թղթակից:**

**815. ՊԵՅԱԿԱՆ համալսարանի նոր կորպուսի կառուցումը:** 1947, հուլիս-օգոստ., էջ 86:

**816. ՊՂՆՁԱ-մոլիբդենային նոր հանքավայր:** [Սիսիանի շրջանի Դաստակերտ գյուղի մոտ]: 1947, հուլիս-օգոստ., էջ 82:

**817. ՊՂՆՁԻ և մոլիբդենի հարստացման նոր գործարան:** [Քաջարանում: Շինարարության մասին]: 1947, մայիս-հունիս, էջ 81:

**818. ՊՈՂԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ ՎԱՐԴԱՊԵՏ ԾՈՎԱԿԱՆ:—Միջնադարյան տաղասացներ: Քոթան Խլաթեցի:** [Ուսումնասիրություն: Բնագրեր]: 1947, մայիս-հունիս, էջ 57—58:

Բնագիր.՝ **Տաղ խոստովանության:** [Չափածո]: Սկ. Ճըրագ մարմնոյս է իմ խաւար...

**819. ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՎՀ.:—Նկարիչ Սարգիս Խաչատրյան:** [Հնդկաստանից բերած որմնանկարների հավաքածուն Փարիզում ցուցադրվելու մասին]: 1947, մայիս-հունիս, էջ 86—88:

Նույն տեղում՝ «Լրաբերի» խմբագրականը: էջ 88—90:

**820. ՋՐԱՄԲԱՐՆԵՐԻ կառուցում կոլխոզներում:** [Հայաստանում 30 մեծ ու փոքր ջրամբարների կառուցման աշխատանքների մասին]: 1947, սեպտ.-հոկտ., էջ 82—83:

**821. ՋԵՐՄ հանդիպում:** [Հոկտեմբերյանի բամբակազտիչ գործարանի բանվորների հանդիպումը և ընդունելությունը Սիրիայից ներգաղթած հայերին]: 1947, հուլիս-օգոստ., էջ 12:

**822. ՋՈՆՍՈՆ ՀՅՈՒԼԵՏ** դոկտոր:— **Երիտասարդ Խորհրդային Հայաստանը:** Անգլ. թարգմ. Խ. Գուլունցյան: 1947, մայիս-հունիս, էջ 68—71:

Նկար՝ Ազգային եկեղեցական ժողովի նիստերից մեկը:

**823. ՋՐՄՈՒՂՈՒ մագիստրալ Երևանում:** 1947, հուլիս-օգոստ., էջ 86:

**824. ՌՕՏՈՒՆԻ Հ. Ս.:—Հայկական հարցը հունգար հասարակության առջև** [Դոկտոր Նակ Իվանի Զոլթանի խոսքը]: 1947, նոյեմբ.-դեկտ., էջ 76:

**825. ՌՕՏՈՒՆԻ ՀՐԱՆՏ ՍԱՐԳՍԻ:—Պուտաբեշտի հայ գաղութը:** 1947, սեպտ.-հոկտ., էջ 90—91:

**826. ՌՈՒՄԱՆԻՈ առողջապահական նախարարուհին հայուհի մըն է:** [Ֆլորիցա (Ֆլորիկա) Պաղտասարի]: 1947, սեպտ.-հոկտ., էջ 88:

**827. Ս. ԷՋՄԻԱԾՆԻ հոգևոր ճեմարանը հայտարարում է** [ընդունելություն 1947—48 ուս. տարվա: 1-ին, 2-րդ և 3-րդ կուրսերի համար]: 1947, մայիս-հունիս, էջ 96:

Ճեմարանի նկարը:

**828. Ս. ԷՋՄԻԱԾՆԻ հոգևոր ճեմարանը հայտարարում է:** [Ընդունելության կանոններ]: 1947, հուլիս-օգոստ., էջ 96:

**829. ՍԱՆ Ֆրանսիսկոյի ազգային կյանքեն:** [Տեղի ս. Հովհաննես եկեղեցում, անգլերեն լեզվով դասախոսություն՝ «Հայաստանյայց եկեղեցու ծագումը» թեմայով]: 1947, նոյեմ.-դեկտ., էջ 28:

**830. ՍԱՐԳԻՍ Ասլամազյանի երեկոն:** [Մոսկվայում: 50-ամյակի առթիվ]: 1947, մարտ-ապրիլ, էջ 86:

**831. ՍԻՐՈՒՆՅԱՆ [ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ]** (առաջնորդ Հայոց Եգիպտոսի): **Եգիպտոսի թեմի առաջնորդ Տ. Մամբրե արքեպիսկոպոսի նամակը Ամենայն Հայոց կաթողիկոսին:** [Եգիպտոսում ներգաղթի կենտրոնական կոմիտե կազմելու մասին]: 1947, մարտ-ապրիլ, էջ 19:

**832. ՍՄԻԹ ԼԵՔՍԱՆԴՐ:—Հայ դատին համար ծերակուտական Սմիթի խոստումը:** [Հայկական դատի Ամերիկյան հանձնախմբի նախաձեռնությամբ: Որոշումը կայացած է, սեպտեմբերի 25-ին, Նորթ Պըրկըն, Նեու Ճըրզիում, ուղարկված է Միացյալ ազգերի ժողովի Թրյուկվե Լիին]: Թարգմ.՝ Ա. Ծամլյան: 1947, հունվար-փետրվար, էջ 77:

**833. ՍՅՈՒՐՄԵԼՅԱՆ ԼԵՎՈՆ Զ** (Կալիֆորնիա):—**Լևոն Զ Սյուրմելյանի նամակը սովետահայ գրողների երկրորդ համագումարին:** 1947, մարտ-ապրիլ, էջ 93—95:

Սյուրմելյանի դիմանկարով:

**834. [ՍՅՈՒՐՄԵՅԱՆ] ԱՐՏԱՎԱԶԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ:—Երթաք բարյավ. սիրտս ձեր սրտերուն հետ:** [Ողջերթ ֆրանսահայ ներգաղթողներին]: 1947, նոյեմբ.-դեկտ., էջ 30—31:

**835. [ՍՅՈՒՐՄԵՅԱՆ] ԱՐՏԱՎԱԶԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ:—Հազա՛ր բարև, հազա՛ր արև Խորհրդային Հայաստանի 26-րդ տարեդարձին:** 1947, հունվար-փետրվար, էջ 86:

**836. «ՍՈՎԵՏԱԿԱՆ գրող» հրատարակչություն:** [Կազմակերպվել է Հայաստանի Սովետական գրողների միության կից]: 1947, սեպտ.-հոկտ., էջ 78:

**837. ՍՈՎԵՏԱԿԱՆ Հայաստանի 27-րդ տարեդարձի տոնակատարությունը արտասահմանում: Նյու-Յորք:—Բուխարեստ:— Բեյրութ:— Կահիրե:** 1947, նոյեմբ.-դեկտ., էջ 17—18:

**838. ՍՈՎԵՏԱԿԱՆ Հայաստանի 27-րդ տարեդարձի տոնակատարությունը: Երևանի քաղաքային Սովետի հանդիսավոր նիստը նվիրված Սովետական Հայաստանի 27-րդ տարեդարձին:** 1947, նոյեմբ.-դեկտ., էջ 16—17:

**839. ՍՈՒՐԵՆՅԱՆՑ ՎԱՐԴԳԵՍ:—Ս. Էջմիածնի վերաշինության խնդիրը: (Նորին վեհափառութեան կաթողիկոսին մերոյ և հայրապետին Ամենայն Հայոց Տեառն Տեառն Մատթէոսի երկրորդի: Ամենախոնարհ զեկուցումն յաղագս վերանորոգութեան Տաճարին Սբ. Էջմիածնայ).** 1947, հունվար-փետրվար, էջ 35—39:

Սուրենյանցի դիմանկարով:

Նույն տեղում՝ **Հարությունյան Գ.:—Նկարիչ Վարդգես Սուրենյանցի «Յաղագս վերանորոգութեան տաճարին սբ. Էջմիածնայ» զեկուցագիրը:**

Զեկուցագիրը պահպանվում է ՀՍՍՀ պետական կենտրոնական արխիվում:

**840. ՍՈՒՐՄԵՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ:—Դեպի վերջին հանգրվանը:** [Բեյրութից ժամանած հայ ուսուցչի երախտագիտության խոսքը]: 1947, հուլիս-օգոստ., էջ 11—12:

**841. ՍՈՒՐՅԱՆ ԱՍՏՂԻԿ:—«Ամիս մ' ի Հայաստան»** [Սիոն եպիսկոպոս Մանուկյանի նույնանուն գրքի գրախոսությունը]: 1947, հունվար-փետրվար, էջ 90—92:

Սիոն եպիսկոպոսի դիմանկարով:

**842. ՍՍՌՄ Գեղարվեստից Ակադեմիայի ընդհանուր ժողովի առաջին սեսիան:** 1947, նոյեմբ.-դեկտ., էջ 83:

**843. ՍՍՌՄ Մինիստրների Սովետում:** [1946 թվի գիտական նշանավոր աշխատանքների համար **պետական մրցանակների շնորհում. Խաչատուր Սեդրակի Կոշտոյանցին, Արտեմ Իվանի Միկոյանին, Ռոլեն Արսենի Իոնիսյանին, Սերգեյ Արմենակի Կայսարյանցին, Նորայր Գրիգորի Գրիգորյանին, Համլիկ Ավետի Ենգիբարյանին, Սուրեն Խորենի Կլորիկյանին, Լիպարիտ Սմբատի Ծուղուրյանին, Ռուբեն Նիկոլայի Սիմոնովին**]: 1947, մայիս-հունիս, էջ 76:

**844. ՍՍՌՄ-ի հետ կուլտուրական կապի Ալբանական ընկերության դելեգացիան Երևանում:** [Տպավորություններ]: 1947, հուլիս-օգոստ., էջ 79—80:

**845. ՎԻԵՆՆԱԿԱՆ Մխիթարյան միաբանության կյանքեն:** 1947, հուլիս-օգոստ., էջ 93:

**846. Տ. Տ. ԳԵՎՈՐԳ Զ ծայրագույն պատրիարք և կաթողիկոս Ամենայն Հայոց:** [Դիմանկարը: Անվանակոչության տոնի առթիվ]: 1947, սեպտ.-հոկտ., էջ 39:

**847. ՏԱՆՆ Կիլիկիո կաթողիկոս Տ. Տ. Գարեգին Ա-ի համառոտ կենսագրությունը:** 1947, հունվար-փետրվար, էջ 14—18:

**[Լուսանկարներ]** 1945 թվի կաթողիկոսական ընտրության և օծման օրերին Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Գևորգ Զ և Տանն Կիլիկիո կաթողիկոս Տ. Տ. Գարեգին Ա դուրս են գալիս Մայր Տաճարից:—...Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Զ, Տանն Կիլիկիո կաթողիկոս Տ. Տ. Գարեգին Ա և Երուսաղեմի պատրիարք Տ. Կյուրեղ Բ վեհարանի պարտեզում:—1945 թվին հայրենիք ժամանելով Տ. Տ. Գարեգին կաթողիկոսը վերստին այցելում է իր սիրած հուշարձանները:—...Գարեգին Ա Բեյրութի նավահանգըստում ողջերթ է մաղթում առաջին կարավանով մեկնող հայրենադարձներին: 1947, հունվար-փետրվար, էջ 15—18:

**848. ՏԱՍՆԵՐԵՔ ՀԱԶԱՐ սենյակ:** [Շինարարության զարգացումը Սովետական Հայաստանում]: 1947, մարտ-ապրիլ, էջ 78:

**849. ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՍԵՆ:** — Էջմիածին: [Չափածո]: 1947, մայիս-հունիս, էջ 5:

**850. ՏՅՈՒԼԿԵՐՅԱՆ Բ.:—Հայ և եգիպտական եղբայրության փառահեղ ցույց մը Գահիրեի մեջ:** [Մասնակցությամբ ծերակույտի նախագահ Հայկալ փաշայի և կառավարական բարձրաստիճան անձանց, ինչպես նաև Սովետական և Իրանական դեսպանների]: 1947, մայիս-հունիս, էջ 85:

**851. ՏՆԵՐ արտասահմանյան հայերի համար:** [Երևանում]: 1947, մարտ-ապրիլ, էջ 79—80:

**852. ՏՈԼՄԱՋՅԱՆ Ժ.:—Աշխատում ենք կրկնապատիկ եռանդով:** [Կիրովականի կարի ֆաբրիկայում աշխատող հայրենադարձ հայերի մասին]: 1947, հուլիս-օգոստ., էջ 18—19:

**853. ՓԱՐԻԶԻ հայ եկեղեցվո վարչության ընտրությունները:** 1947, սեպտ.-հոկտ., էջ 46:

**854. ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ: — Մենք ՍՍՌՄ-ի քաղաքացի ենք:** [Խոսք հայրենադարձի]: 1947, հուլիս-օգոստ., էջ 12:

**855. ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾ Գրիգոր Ահարոնյանի աշխատանքները:** [Համառոտ տեղեկություններ]: 1947, հունվար-փետրվար, էջ 84:

**856. ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՈՒՀԻ Այծեմիկ Ուրարտուի արվեստանոցում:** [Համառոտ տեղեկություններ գործերի մասին]: 1947, հունվար-փետրվար, էջ 84:

**857. ՕԼՍԵՆ ԱԼԲԵՐՏ:** (Կոպենհագենի համալսարանի պրոֆ.):—**ՍՍՌՄ-ի հետ կուլտուրական կապի Դանիական ընկերության նախագահ պարոն Օլսենը Երևանում:** [Տպավորություններ Հայաստանի և հայրենադարձության մասին]: 1947, մարտ-ապրիլ, էջ 76—77:

**858. ՕՐԻՈՐԴ [Արաքսի] Պապիկյան Ամերիկայի մեջ:** [Պոլսից. Կոմիտասի աշակերտուհին: Երգչուհի]: 1947, նոյեմբ.-դեկտ., էջ 88—89:

**859. ՖԵՏՎԱՃՅԱՆ Ա[ՐՇԱԿ]:—Իմ նվիրաբերությունները հայ ազգին:** [Հարուստ հավաքածուն, մահվանից առաջ, Հայաստանի պետական թանգարանին նվիրելու մասին]: 1947, հուլիս-օգոստ, էջ 89—91:

**860. ՖՐԱՆՍԱՅԻ հայտնի անձնավորությանց դիմումը ի նպաստ Հայաստանի Վիլսոնյան սահմաններուն: Հայկական դատի ֆրանսացի բարեկամները հետևյալ կոչը հանձնած են չորս մեծերու արտաքին գործոց նախարարներուն:** [Հրապարակված են կոչը ստորագրողների անձնանունները]: 1947, հունվար-փետրվար, էջ 74—75:

**861. ՖՐԱՆՍԻԱԿԱՆ իշխանությունների նոր կամայականությունը:** [Խոչընդոտների հարուցում Ֆրանսիայից ներգաղթող հայերի համար]: 1947, նոյեմբ.-դեկտ., էջ 35:

(Շարունակելի)

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ